

209

ԱՆՁՆԵՐԻ

ԱՌՋԵՌՆ

ԲԺՇԿԱՐԱՆ

Կազմեց

Բժշկութ. ֆերաճը Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ.

Գիշե է 50 ԿՈՊ.

ԹԻՑԼԻԶ

Տպարան «ՀՊՕԽԱ» Մուղեյսկի պերեուլ. № 8
1914

61

5 - 58

08 APR 2013

20 JUL 2010

61
G-58
ԱՀ

ԳՈՐԾՎԱՆՔՆԵՐԻ
ԸՆՉԵՐԻՆ

ԲԺՇԿԱՐԱՆ

1003
10127

Դազմեց բժշկութ. ֆելլուր
Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆՑ



ՕՐԵԱ ԽՈՎ 81

763

Այս աշխատութիւնս

ՆՈՒԻԻՐՈՒԻՐ եՄ
ՄԱՐԴԱՍՔՐ եհ ՇՆՈՐՀԱԼԻ

ՔԺՀԿԱՊԵՄ ԱԼՔԸԸՆԴԻՐ ԱԲՏԵՄԵՒԻՉ

ՅԱՐՈՒԹԻՒՆԵԱՆՑԻՆ

Ի նշան անսահման յարգանաց և
յաւէմ երախտագիտութեան:

ԲԺՂԿ. ՖԵԼԴՀԵՐ Ա. ԵՍԱՂԵԵԱՆ

ՅԱՌԱՋԱԲԱՆ

Հրատարակելով իմ այս բժշկաբանը նպատակ-
ամ եմ գրել օգնած լինել գաւառական ու
գիւղական այն ժողովրդին, որը հեռու ապ-
րելով բժշկական կենտրոններից զուրկ է մնում
բժշկական շուտափոյթ օգնութիւնից: Ի հարեւէ
այս փոքրիկ բժշկարանը միակ յոյս և ապաքէն
չի կարող լինել և չի ժխտում ծանր զէպքե-
րում բժիկին դիմելու անհրաժեշտութիւնը,
սակայն առօրեայ փորձանքների միջոցին շատ
մեծ ծառայութիւն կը մատուցանէ, ազատելով
վնասված մարդուն յուսահատ դրութիւնից:
Տգէտ ժողովրդի մէջ, մանաւանդ գիւղերում,
դժբախտութիւնների միջոցին դիմում են ևս
առաւել տգէտ խարերայ հէքիթների կամ
ապիկար դալաքների, որոնք փոխանակ յօնքը
շինելու աշքն էլ են հանում և իրանց գրպան-
ները լցնում: Ձեռքի տակ ունենալով այս
հանրամատչելի բժշկարանս ամեն մի գրագէտ
մարդ կարող է մարդասէր ծառայութիւն մա-
տուցանել իր շրջանում փորձանքների ժամա-
նակ, հասցնելով խելացի և էական օգնու-
թիւն լսու բժշկաբանին ցուցման: Ի նկատ
ունենալով, որ այս գրքոյիս կազմել եմ միջին

ՕԳՏԱԿԱՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Նախ պէտք է ասել, որ ամեն փորձանքի ժամանակ; լինի նա ծանր թէ թեթև, ըստ պէտքէ շփոթվել, անտեղի աղմուկ հանել և այս ու այն կողմ վազվգել գլխին զարկելով։ Այլ անհրաժեշտ է սառնարինութիւն, որով աւելի շատ բարած կը լինէք, քան թէ բարձրացրած հարաւոհուցութիւնը ոչ միայն ուշադիմ է իսկական օգնութիւնը, այլ վասում է օգնութեան գործին։ Ուստի փորձանքի միջոցին աշխատեցէք զսպել ձեզ, սառնասիրտ լինել և արագ օգնութիւն տալ փորձանքի եկածին, առանց վախեցնելու նրան անտեղի վայուվայնասումով։ Դեղերը տալու ժամանակ ուշադիմ ենէք, լաւ նայեցէք, որ ցանկացած դեղը վերցնէք և ոչ թէ մի ուրիշ թունաւոր դեղ։

Ամէն մի մարդ, ով ուզում է փոր-

և ստորին դասակարգերի, գաւառական և գիւղական բնակիչների համար, հեռու եմ մնացել. Թունդ գրական ոճից ու բժշկական-մասնագիտական տէրմիններից, ուստի գրել եմ շատ պարզ, անպաճոյն լեզով, տգէս և կիսադրադէտ գիւղացուն հասկանալի ոճով։ Աշխատել եմ ցոյց տալ ձեռքի տակ գտնվող հեշտ միջոցներ, որպէսզի փորձանքների միջոցին երկար ժամանակ չը գործադրվի. Բժըշկարանո կազմել եմ մասամբ իմ բժշկական գործունէութիւնից հանած փորձերից և մեծ մասամբ ոռու յայտնի պրօֆէսորների ու բժիշկների կազմած բժշկական-մասնագիտական գրագաժեներից։

Դրանով չեմ ուզում ասել, որ սա բոլորովին անթերի կը լինի. բայց և այնպէս մեծ պատրաստականութեամբ կը լսեմ և ձեռնհաս բժիշկների կարծիքները յետագայ հրատարակութիւնները աւելի ընդարձակ, անթերի և նպատակայարմար դարձնելու համար։

Որպէս առենուն բժշկարան տպագրում եմ փոքրիկ դիքքով, օրացոյցի մեծութեամբ, որպէսզի հեշտ լինի ծոցի գրպանում պահել և փորձանքների դէպքում իսկոյնկեր օգտվել թժշկ. ֆէլդչէր Ա. ԱԱԱՅԵԱՆ։

ձանքների միջոցին և թէ առհասարակ տանը հիւանդութիւններ պատահած դէպերում օգնութիւն հասցնել, պէտք է գիտենայ հետեւեալը:

1.

ԲԻՆՏԱԿԱԾ ԱՆԵԼ ԿԱՄ ՓԱԹԱԹԵԼ.
—Վէրքերը փաթաթելու համար սովորաբար գործ են ածվում դեղատներում ծախվող պատրաստի բինտերը. շտապողական դէպում բինտը կարելի է տանը պատրաստել այսպէս.—մաքուր սպիտակ միտկալից կամ մարլից 1 վերշոկ լայնութեամբ երկար շերտ կարել ու փաթաթել վէրքը: Միշտ պէտք է նոր, մաքուր կտոր (բինտ) գործածել. իսկ եթէ հնարաւորութիւնը կայ շարունակ նոր բինտ պատրաստել և երբ վէրքը վարակիչ թարախ չունի, կարելի է կեղտոտ բինտերը լաւ եփել, լուանալ չորացնել ու նորից գործածել. Վէրքը փաթաթելիս

միշտ պէտք է մարմնի ծայրից դէպի բունը փաթաթել. օրինակ, թևի վէրքը փաթաթելու համար պէտք է շորի կամ բինտի ծայրը ձեռքի վարի մասում դնել և սկսել օղակաձև դէպի վեր, այսինքն դէպի ուսու, փաթաթել. ոտքի վէրքը փաթաթելու պէտք է ներքսից վերև փաթաթել: Այս օրէնքը անհրաժեշտ է գիտենալ, հակառակ դէպում արեան շըջանառութիւնը կարող է խանգարվել:

2.

ԲԱՆԿԱՆԵՐ.—(Չոր բանկաներ.)
Վերցնել մաքուր փողքիկ բաժակներ (պուռնկները ամբողջ լինեն) 8—10 հատ. սկիպիտարում կամ սպիրտում թաթախած բամբակի կտոր վառել, մարմնին մօտ բռնած բաժակի մէջը տանել և արագ դուրս հանելով, վայրկենապէս բաժակը պինդ կպցնել մարմնին: Այսպէս բոլոր բաժակները կըպ-

ցնել իրարից մօտ 1 վերշոկ հեռու։ Թռղնել այնքան ժամանակ, մինչև որ կպցրած տեղը կարմրի և դէպի ներս քաշվի բաժակի մէջ։ Դեղատներում ծախվում են բանկաներ։

3.

ԳԱՐՉԻՉՆԻԿ կամ ՄԱՆԱՆԵԽԻ ԿՕՄ-ՊՐԵՍ. — Մանանեխը շաղախել, ջրալի խմոր շինել, քսել մի փոքրիկ շորի կառրի վրայ բարակ շերտով. ապա կպցնել հիւանդ տեղին, վրայից դնել մի ուրիշ կտոր քաթան և թողնել այնքան ժամանակ, մինչև որ կաշին կարմրի և այրոցի նման տաքութիւն դգացվի (բաւական է 5—10 ըոպէ)։ Դեղատներում ծախվում է պատրաստի ֆրանսիական գարչիչնիկ, որը սաստիկ զօրել է։ Սա դնելու համար այսպէս վարվել. — քսած. երեսը թրչել ջրով, կպցնել բարակ թուղթ և ապա դնել ցանկացած տեղին. բաւական է 3—5 ըոպէ։

ԿԼԻՍՏԻՐ. — Կլիստիրները լինում են մեծ մասամբ Յ լուծողական, դեղային և մննդարար։ Կլիստիրների համար գործ է ածվում ամենից շատ էսմարխի կրուժկան։

Ա. Զափահաս մարդուն լուծողական կլիստիր գնելու համար վերցնել Յ բաժակ ջուր սենեակի տաքութեան (18—20 աստիճան), մէջը մի քիչ սապոն վլըրփըրեցնել, լցնել 2 հացի գդալ գէնակէրչակի իւղ կամ զլիցէրին և կամ թէ՛ 2 հատ ձուի դեղնուց. լաւ խառնել և ապա պառկելով ձախ կողքի վրայ հեղուկը ներս լցնել։ Այնուհետև պէտք է աշխատել 5—10 ըոպէ ջուրը փորի մէջ պահել, միւս կողքին շուռ գալ որպէսզի աղիքներում գտնվող կեղտի պինդ մասերը հալվեն։

Բ. Դեղային կլիստիրներ նշանակում է բժիշկը, որը և մանրամասն բացա-

տրում է դեղի քանակութիւնը և ժամանակը, Սրսկելու ձևը նոյնն է:

Գ. Սննդաբար կլիստիր դրվում է, երբ հիւանդը չի կարողանում բերանից կերակուր ընդունել, Այդ նպատակով գործ է ածվում կաթ, ձուի դեղնուց, մսաջուր, պրօվանսի իւղ և այլն:

5.

ԿՕՄՊՐԵՍ.—Սառը, Դրվում է այն նպատակով, որպէսզի դրված տեղը սառչի, արիւնը յետ մղվի և տաքութիւնը իջնի, կարմրութիւնը և ցաւը անցնի: Սառը կօմպրէսը այսպէս է դրվում.—մի կտոր քաթան կամ երեսսրբիչ միքանի տակ ծալել, թրչել սառը ջրում, քամել այնքան, որ ջուրը չը կաթկաթէ, և դնել ֆսասված տեղի վրայ: Հէնց որ կօմպրէսը տաքանայ, անմիջապէս նորից թրչել սառը ջրում:

6.

ԿՕՄՊՐԵՍ ՏԱՔԱՑՆՈՂ.—Դրվում է

տաքութիւն առաջացնելու նպատակով, որպէսզի բորբոքումը պակասի, թարախակալութիւնը շուտ հասնի ու պատովի, գունատ մարմնի մասի մէջ արեան երակները լայնանան և արիւնը ցվի, բորբոքումից յետոյ մնացած զանազան ուռուցքներ հալվեն և այլն: Տաքացնող կօմպրէսը շինել այսպէս:— փափուկ քաթանը կամ երեսսրբիչը ծալել 4-6 տակ, թրչել սենեակի տաքութեան ջրում կամ թէ հէնց տաք ջրում, լաւ քամել, դնել ցանկացած տեղին և վրայից ծածկել կլէօնկայով (կօմպրէսի կլէօնկան ծախվում է դեղատներում) կամ թէ մոմած թղթով, սրա վրայից դնել չոր մահուդ կամ բամբակ և փաթաթել: Կօմպրէսը փոխել Յ ժամից յետոյ: Աւելի մեծ տաքութիւն ստանալու համար յիշած կօմպրէսի փոխարէն կարելի է անել հետևեալը, - փոքրիկ տոպրակի մէջ

լցնել տաքացրած աւազ, մոխիր, աղ, թեփ և այն, և դնել ցանկացած տեղն. կարելի է դնել շիշերով տաք ջուր։
7.

ՍՐԾԿՈՒՄՆ ԿԱՄ ԼԹԻՑՑՈՒՄՆ. —
Մարմի անցքերը և խողովակները լուանալու համար կան զանազան տեսակ գործիքներ (սպրինցօվկաներ) Ծան սէջ ունենալ անհրաժեշտ է տղամարդի համար փոքրիկ սպրինցօվկա բէզզինի ծայրով (Сприацковка Тарновская), միզանցքի բորբոքման ժամանակ սրսկումներ անելու։ Նախ քան սրսկելը անպայման հարկաւոր է սպրինցօվկան գոլ ջրով կամ թէ կարբուկան 5% լուծվածքով լաւ լուանալ։ Դեղը սպրինցօվկան լցնելուց յետոյ պէտք է դեղի հետ մտած օդը դուրս թողնել (բէզինի ծայրը վեր բարձրացնել և սղիչը սեղմել մինչև որ օդը դուրս գայ և դեղը երեայ.) սպրինցօվկի

ծայրը դնել միզանցքին և դեղը հանդարտ ներս մղել։ Սրսկումից առաջ պէտք է միզել կանանց համար պէտք է ունենալ կամարի կրուժկան։ Սըրսկելու համար պէտք է դեղը լցնել կրուժկան պատին կախել պառկած տեղից 1/3, արշին բարձրութեան վրայ և խողովակի ծայրը զգուշութեամբ բռնուցը տանել և լուանալ։

—ο—

ՑՆԱՑԻՆ ԳԵՂԱԲԱՆ

Իւրաքանչիւր ընտանիքում անհրաժեշտ է ունենալ որոշ տեսակի դեղեր, որոնք գործ են ածվում փորձանքների միջոցին։ Շուտափոյթ օգնութիւնը շատ մեծ նշանակութիւն ունի բժշկվելու համար։ Երբեմն մի բուպէ ուշանալը մահվան պատճառ է դառնում։ Ուրեմն հասկանալի է, թէ ինչքան կարևոր է տան մէջ, ձեռքի

տակ, ունենալ ամենագործածական և
անվասա դեղերը յանկարծակի հիւան-
դութիւնների դէպքերում շուտով օգ-
նութիւն ստանալու համար: Բոլոր
դեղերը և գեղային պարագաները
պէտք է պահպեն փակ պահարանի մէջ,
նախ՝ որպէսզի նրանք չը փողոտվեն
ու չը փշանան, երկրորդ՝ որպէսզի դե-
ղերից չօգտվեն երեխաները խաղալին,
կամ մեծերը անգիտակցարար և կամ
թէ թունաւորվելու նպատակով: Իւ-
րաքանչիւր դեղի անունը պարզ գրված
պիտի լինի իր սրուակի վրայ: Ներքին
—խմելու դեղերը պէտք է պահարանի
մէկ թարաքի վրայ դարսել, իսկ ար-
տաքին գործածելու դեղերը միւս
թարաքի վրայ և ոչ մի դէպքում
նրանց իրար հետ չը խառնել:

—•—

ՏՆԱՅԻՆ ԴԵՂԵՐԱՆԻ ԸՆՀՐԱԺԵՏ ԴԵ-
ՂԵՐԸ

1.

ԱՆԳԼԻԱԿԱՆ ԼՈՒԾՈՂԱԿԱՆ Ա.Դ.—
(Անգլիական սոլ): Մէկ հացի գդալ
հալեցնել մէկ բաժակ սառը ջրում և
խմել:

2.

ԱՐՃՃԱՋՈՒՐ.—(Свиная вода):
Կաթնագոյն հեղուկ. գործ է ածվում
սառը կօմպրէսների և լուացումների
համար: Գործածելու ըստէին սրուակը
խառնել:

3.

ԲԵՐՏՈԼԵՏԵԱՆ Ա.Դ.—(Бертолетовая
соль): Գործ է ածվում միմիայն ար-
տաքուստ. մէկ թէյի գդալ հալեցնել
մէջ բաժակ ջրում և դրանով ողողել
բերանը, կոկորդը (բկացաւի ժամա-
նակ), փթած ատամները:



4.

ԲՐՈՄԻ ՆԱՏՐ (Бромистый натръ.)

Սպիտակ փոշի է: Պահպում է մուգ գոյնի սրուակում: Գործ է ածվում լնկներութեան, անքնութեան, սրբախառնութեան և այլ բազմաթիւ հիւանդութիւնների դէմ: Միանուագընդունվում է $\frac{1}{2}$ գրամ:

5.

ԲՈՐԱԿԱԹԹՈՒ.—(Борная кислота):
Սպիտակ փայլուն բիւրեղեայ թեթև թեփուկներ, առանց հոտի: Ներքուստ չէ գործածվում: Անֆաս և շատ գործածական միջոց է ախտահանիչ լուացումների, վէրքերը լուանալու, բերանը ողողելու, միզանքը սրսկելու և այլն նպատակների համար: Երկու թէյի գդալ բօրակաթթու հալեցնել մէկ բաժակ տաք ջրում և սառը դրութեամբ պահել:

6.

ԳԵՆԱԿԵՐՉԱԿԻ ԻԻԴ.—(Касторовоое

մածո): Թանձր, պարզ, անգոյն լուծողական իւղ է: Ընդունվում է 1—2 հացի գդալ (փոքրերին 2—3 թէյի գդալ): Գէնակէրչակի իւղը քնքոյշ և անֆաս լուծողական է: չէ գրգռում աղիքները և լուծելիս սանջու չէ առաջացնում, ինչպէս միւս լուծողականները: Անդուր համը չըզգալու համար կարելի է ընդունել գարեջրով, կարմիր գինով, բուլիօնով կամ սուրճով:

7.

ԳԼԻՑԵՐԻՆ.—(Глицеринъ): Շաքարաջրի նման թանձր, պարզ, անգոյն և անհոտ հեղուկ է: Քաղցր համ ունի: Մեծ մասամբ գործ է ածվում արտաքին հիւանդութիւնների ժամանակ. ձեռքերի կաշւի ձեղքճեղքոցի դէմ,

նաև 1—2 հացի գդալ խառնում են 5
բաժակ ջրում՝ լուծողական կլիստիրի
համար:

8.

ԳՈՅՑՄԱՆԻ ԿԱՐՄԱՆԵՐ.—(Գոյման-
չուա քառայ): Պարզ, անգոյն հեղուկ է.
պահվում է պինդ ծածկած սրուակում:
Գործ է ածվում 20-ական կաթիլ
ընդհանուր թուլութեան, ուշագնա-
ցութեան, սրտախառնութեան ժամա-
նակ:

9.

ԴԱՌԻ ԶՈՒՄ.—(Եղա գորե-
աց մանձալա): Անգոյն, պարզ, դու-
րեկան հոտով, դառն համի հեղուկ է,
պահվում է մուգ գոյնի սրուակում:
Գործ է ածվում 10—15 կաթիլ սրտի
թրթրոցի, ջղային ցնցումների, սրտա-
խառնութեան և այն ցաւերի դէմ:

10.

ԵՐԿԱՐԱՊԱՏ ԲԱՄԲԱԿ.—(Ժելէվի-

տայ վատա): Դեղնագոյն բամբակ է,
փոքրիկ կտորներով դրվում է փոքրիկ
արինհոսութեան ժամանակ, նաև քթի
արինհոսութեան դէմ. արինը խսկոյն
կանգնում է:

11.

ԻՕԴԻ ՀԵՂՈՒԿ, ԿԱՐՄԻՐ ԻՕԴ.—
(Խօճատա հաստոյեց): Մուգ-կարմրա-
գոյն հեղուկ է. գործ է ածվում ար-
տաքուստ զանազան ուռուցքների,
կոշտերի վրայ բաելու. ըէլմատիզմի
և մրսած ժամանակ առաջացած ցա-
ւերի դէմ, թոքերի ծակոցների և բոր-
բոքման դէմ:

12.

ԻՕԴՕՖՈՐՄ.—(Խօճօֆօրմ): Դեղնա-
գոյն փոշի է. ունի խիստ հոտ: Գործ
է ածվում միմիայն վէրքեր բժշկելիս.
Նա պակասեցնում է թարախը և չո-
րացնում է վէրքը. Կարելի է իօդօ-
ֆօրմի, փոշին ցանել վէրքի վրայ կամ

թէ իօդօֆօրմի մազ պատրաստել քը-
սելու համար:

13.

**ԽԻՆԻՆ ԿԱՄ ՔԻՆԱՔԻՆԱ. — (ՏԱ-
ԱԱԲ):** Սպիտակ բիւրեղեայ փոշի,
սաստիկ գառն համ ունի. գործ է ած-
վում տաքութեան, դողի, մրսածու-
թեան, և այլ ցաւերի ժամանակ 5-
ական գըան:

14.

**ՄԵԱՏԻՆԻ ԿԱԹԻԼՆԵՐ. — (Մատեա
Կառլ):** Կանաչ գոյնի, պարզ, հոտա-
ւէտ հեղուկ է. շատ է գործածվում
սովորական փորացաւի, սանջուի, լու-
ծողութեան ժամանակ 20-ական կա.
թիւ քիչ ջրով:

15.

**ՄԵԽԱԿԻ ԻԻՂ. — (Гвоздичное мас-
ло):** Թանձր, պարզ, մուգ գոյնի, դու-
րեկան հոտով հեղուկ է. Գործ է ած-
վում ատամնացաւի ժամանակ: Մի

փոքրիկ կտոր բամբակ թաթախել և
դնել ցաւող ատամի մէջ:

16.

**ՆԱՇԱՏԻՐԻ ՍՊԻՐ. — (Нашатирный
спирт):** Պարզ, անգոյն, սաստիկ սուր
հոտով հեղուկ: Մեծ մասամբ գործ է
ածվում ուշաթափութեան ժամանակ
քթին դէմ տալու, որի թափանցիկ
հոտը սթափեցնում, ուշքի է բերում:
(Զգոյշ—աչքերի, քթի կամ բերանի
մէջ չը թափել): Նաև քսիլում է օծի
և ուրիշ խայթող միջատների կծածի
վրայ:

17.

ՇԻԲ. — (Бласцы): Սպիտակ աղի նը-
ման փոշի. գործ է ածվում արիւն—
հոտովթիւնների, սուսունակի, կանանց
սպիտակահոսութեան և այլ նման
հիւանդութիւնների ժամանակ: (Երկու
թէյի գդալ ծեծած շիբը 4 բաժակ ջրի
մէջ հալեցնել):

18.

ՍԱԼԻՑԻԼԵԱՆ ՆԱՏԲ.—(Салициловый настры): Քնքոյշ, բիւրեղանման, սպիտակ, փայլուն պարաշօկ է: Ունի աղիա—քաղցր համ: Գործ է ածվում բէվմատիզմի, տաքութեան և ջղային ցաւերի դէմ. ընդունել կարելի է մի-անդամից 8 գրան:

19.

ՍՈԴԱ.—(Сода): Սպիտակ փոշի, գործ է ածվում ստամոքսի, թոքերի, միզապարկի, բէվմատիզմի, չաղութեան և ուրիշ շատ հիւանդութիւնների ժամանակ: Կէս թէլի գդալ սօդա կէս բաժակ ջրով ընդունել:

20.

ՍԿԻՊԻՏԱՐ ԶՏԱԾ.—(Очищенное скипитарное масло): Պարզ, անգոյն հեղուկ է. ներքուստ գործ է ածվում որոշ հիւանդութիւնների դէմ 5—10 կաթիլ միմիայն բժիշկների խորհրդով:

Շատ գործ է ածվում արտաքուստ կաշւի հիւանդութիւնների, բէվմա-տիզմի, մրսելու և այլ ցաւերի ժա-մանակ:

21.

ՎԱԼԵՐԻԱՆԻ ԿԱԹԻԼՆԵՐ.—(Эфирно-валерianовая ваты): Շատ յաճախ գործածական կաթիլներ. պարզ մուգ-գեղնագոյն հեղուկ. գործ է ածվում 15—20 կաթիլ սրտի թուլութեան, սրտի թրթրոցի, ընկհանուր թուլութեան, ուշագնացութեան, ջղայնութեան և այլ հիւանդութիւնների ժա-մանակ:

—○—

Բացի վերոյիշեալ գեղերից պէտք է ունենալ մարմնի և ջրի ջերմաչափներ, կօմպրէսի կլէօնկա կամ մոմած թուղթ, (вощеная бумага), սառուցի համար բէ-զինի տուղրակ, մաքուր բամբակ (твяг-роскочная вата), մարզի, բինտեր,

Էսմարխի կրուժկան իր բոլոր մասերով։
Ծանկալի է ունենալ նաև դեղատան
փոքրիկ կշեռք իր չափսերով։ Գնելու
ժամանակ կարելի է խնդրել դեղա-
տանը, որ բացատրեն չափսերը։ Իւ-
րաքանչիւր չափի վրայ գրված է գրա-
նի կամ գրամի թիւը։ Հետեապէս
դժվար չէ գործածել այդ կշեռքը։

22.

ՏԱՆՆԻՆ.—(Տաննին)։ Դեղնագոյն,
թեթև փոշի է, գործ է ածվում ստա-
մոքսի, աղիքների, թոքերի և երիկա-
մունքների արիւնհոսութեան դէմ,
փոքրիկ չափերով ($1/2$ — 3 գրան)։ Աւե-
լի յաճախ արտաքին գործածութիւն
ունի կամ միայնակ կամ թէ զանա-
զան փոշիների հետ խառն, լուծված
գրութեամբ, մոմերի մէջ և այլն։

23.

ՐՈՄԱՇԿԱ. ԾԱՂԻԿ. — (Ռոմաշկա)։
Անգլաս և շատ գործածական է փո-

րացաւի, սանջուի միջոցին, նաև որ-
պէս քամի վռնառող, ամսական կապ-
ված արիւնը քանդող միջոց։ 1—2 թէյի
գդալ չորացրած ծաղիկը եփել 2 բա-
ժակ ջրում ինչպէս թէյ և խմել տաք-
տաք։

24.

ՑԱՆԿՈՎԻ ՄԱԶ.—(Цинковая мазь)։
Քսվում է փոքրիկ խոցերին և կաշւի
հիւանդութիւնների ժամանսկու

25.

ՔՍԵՐՈՅՈՐՄ.—(Ксероформъ)։ Դե-
ղին փոշի է, գործ է ածվում վերերը
բժշկելու համար։

26.

ՖԵՆԱՊԵՏԻՆ.—(Фенапетинъ)։ Ան-
գոյն, փայլուն, անհամ փոշի է։ Գործ
է ածվում տաքութեան և ջղային ցա-
ւերի դէմ։ Միանգամից կարելի է ընդ
դունել 5 գրան։

ՓՈՐՁԱՆՔՆԵՐ ԵՒ ՆՐԱՆՑ ՕԳ- ՆԵԼԸ

1.

ԱԾԽԱՀՈՏԻՑ ՈՒԾԱԹԱՓՈՒՄՆ.—(Սրբքեա) կամ ածխահարվելը առաջ է գալիս, երբ արիւնը վարակվում է ածխաթթւի ոքսիտով (օքուս յցլերոда): **Ածխածինը գոյանում է մարմինների այրվելուց** (օրինակ փայտի, ածուխի, նաւթի և այլն), մարդկանց ու կենդանիների շնչելուց, փթելուց, թթվելուց և գիշեր ժամանակ բրոյսերից: **Ածխածինը վաստ և թունաւոր գաղ է:** Օդի մէջ նա միշտ գտընվում է, սակայն շատ քիչ քանակութեամբ (հազիւ 1%): Երբ նա որևէ տեղում օդի մէջ շատանում է և հասնում $2-3\%$ -ի, այն ժամանակ թունաւորում է մարմինը: Երբ ձմեռը վառարանը ծածկում են դեռ փայտերը

լիովին չը վառված և կրակ չը դարձած, այն ժամանակ ածխածինը մեծ քանակութեամբ արտադրվելով տարածվում է օդի մէջ և մարդու շնչած օդի հետ մտնում է թոքերը, թափանցում արեան մէջ և այդպիսով թունաւորում մարմինը: Թեթև թունաւորման ժամանակ առաջանում են գլխացաւ, ականջներում զժղժոց, գլխապտոյտ, սրտախառնութիւն, փոխումն, երբեմն էլ փորլուծութիւն, սրտի թեթև բախումն: Աւելի խիստ թունաւորութեան դէպքում, այսինքն երբ ածխածինը մեծ քանակութեամբ և բաւական երկար ժամանակ մտել է արեան մէջ, վերոյիշեալ երևոյթներին միանում են սրտի ուժեղ բարախումը, կրծքի մէջ ձնշումն, ընկուտութիւն և վերջապէս ուշաթափութիւն: Երեսի գոյնը թռչում է, սաստիկ գունատվում, շնչառութիւնը դանդաղում և թուլանում է.

ծել, այլ սառնասրտութեամբ և զգուշութեամբ պէտք է յիշված կանոններով վարդել, որից յետոյ մեծ մասամբ ուշաթափները զգաստանում են, ուշաթիւ են գալիս: Եթէ արդէն զարկերակը սկսեց զարկել, շնչառութիւնը գործել, իսկոյն պէտք է 20 կամ 25 կաթիւ վալէրեանի կաթիւներից խմացնել քիչ ջրով: Եթէ ձեռքի տակ չը կան յիշեալ կաթիւները, կարելի է նաև Գօֆմանի կաթիւներից, կամ սև սուրճ, կարմիր գինի, մուգ թէյ, կօնեակ խմեցնել: Ուշքի գալուց յետոյ, երբ հիւանդը գանգատվի սրտախանութեան վրայ, կարելի է մատով կատիկը խտղտել և փոխումն առաջ բերել, որը բաւական կը թեթևացնէ նրան: Երբ ածխահարվածը լիովին ուշքի գայ, կարելի է նրան քննեցնել մաքուր օդով սենեակում:

Ինքնըստինքեան պարզ է՝ որ ած-

աչքերի բիբերը լայնանում են, զարկերակը բոլորովին թուլանում և համարեա անջօշափելի է դառնում: Եթէ այսպիսի դէպքում ածխահարվածին շուտով օգնութիւն չը հասցնել, կառաջանայ մահ: Օգնել պէտք է այսպէս.—ածխահարվածին դուրս տանել մաքուր և թարմ օդի մէջ, եթէ արդէն ուշաթափ է և անզգայ, իսկոյն պառկեցնել այնպէս, որ գլուխը մարմնից բարձր լինի դրված: Երեսին ցրցամտալ սառը ջուր. մի կտոր մահուդով, քացախով, արաղով, օդըկօլօնով և կամ հէնց դատարկ ձեռքերով տրորել ոտներն ու ձեռքերը, քունքերը: Քթին դէմ տալ նաշատիրի սպիրտ, նոր արորած խրէն կամ թունդ քացախ: Շընչառութիւնը վերսկսելու համար ամենից առաջ հարկաւոր է շորերը քանդել, կուրծքը ազատ բաց անել: Երբէք չը պէտք է շփոթվել, գլուխ ծե-

իմահոտով վարակված սենեակի օգը
պէտք է մաքրել անմիջապէս դռները
ու պատուհանները բաց անելով:

Սրանից հետեւում է, որ մանաւանդ
ձմեռը, երբ բոլոր դռներն ու պատու-
հանները սեղմ գոցված են, պէտք է
զգոյշ լինել վառարանները անժամա-
նակ փակելուց: Դիւղերում բաց օջախ-
ներով ու մանղաներով ածուխի կրակ
են դնում սենեակում և շուրջը բոլոր-
վելով տաքանում. այսպիսի դէպքե-
րում պէտք է շատ զգոյշ լինել այ-
սինքն կրակը դրսում լաւ չաղացնել,
չը վառված ածուխը կամ փայտը հա-
նել, յետոյ մանղալը տանել սենեակ:
Դէպքել են եղել, երբ մանղալի կրա-
կից քնած ժամանակ թունաւորվել են
ամբողջ ընտանիքներ:

2.

ԱՄՍ ԱԿԱՆ ԱՐԻՒՆՀՈՍՈՒԹԵԱՆ
ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆ.—Եթէ ամսական

արիւնը կապվել է յղիութիւնից, այս-
պիսի դէպքում ոչ մի գեղ կամ միջոց
չը պէտք է գործածել Եթէ արիւնը
յաճախ կապվում է սակաւարիւնու-
թիւնից, անհրաժեշտ է կազդուրիչ զե-
ղեր լնդունել և մննդարար կերակուր-
ներ ուտել: Իսկ եթէ արիւնը կապվի
մրսելուց, այսպէս վարվել.—15 բոսկ
ոտքերը դնել տաք ջրի մէջ (լաւ կը
լինի ջրին խառնել միքանի գդալ ծե-
ծած աղ) և ծնկները տաք հօրզանով
ծածկել: Այս բանը լաւ է անել գի-
շելը, քնելուց առաջ, որպէսզի անմի-
ջապէս անկողին մտնել և տւելի չը
մրսել: Կարելի է կացնել գարչիչնիկ-
ներ փորի տակը և փաչաներին: Բու-
նոցը սրսկել տաք ջուր (30%) օրէնը
2 անգամ. լնդունել լուծողսկան ջուր
Գունեաղի եանօս մէկ բաժակ կամ թէ
անգլիական աղից (Անգլիական սոլ)՝
մէկ հացի գդալ մէկ բաժակ ջրում:

Փորը լուծելուց յետոյ կարելի է խմել
բօմաշկա ծաղկից տաք թէյ:

3.

**ԱՄՍԱԿԱՆ ՍԱՍՏԻԿ ԱՐԻՒՆՀՈ-
ՍՈՒԹԻՒՆ.-** Եթէ արիւնհոսութիւնը
սովորականից աւելի է տեսում և բա-
ւական շատ արիւն կորչում, անմի-
ջապէս պէտք է առաջն առնել, ապա
թէ ոչ մարմինը կը մաշվի և սակաւա-
րիւն կը դառնայ: Այսպիսի դէպքե-
րում տնային միջոցներով օգնութիւն
ստանալուց յետոյ լաւ կը լինի դիմել
մամնազէտ բժշկի, որովհետև զաւակա-
տան մէջ կարող են գոյացած լինել
խոցեր, բորբոքում և կամ թէ զաւա-
կատունը կարող է ծռված լինել: Ան-
ընդհատ և երկար արիւնհոսութիւնը
կարող է առաջացնել թուլութիւն, գըլ-
խապտոյտ և ուշաթափութիւն: Մինչև
բժշկի դիմելը հիւանդին պէտք է
պառկեցնել, խմեցնել թթուաշ խմիչք-

ներ, (օրինակ լիմօնի ջուր), աղա-
ջուր, չիդրաստի կաթիլներից 20-կա-
թիլ օրէնը Յ անգամ (կառլի գիճրա-
տա): Կարելի է բունցը լուանալ կո-
մարիսի կրուժկայից Յ բաժակ ջրով
(15%), աւելացնելով Յ բաժակ օգօ-
թենիան ձրեւենի յացույթից:

4.

**ԱՄՍԱԿԱՆ ԴԺՈՒԱՐ ԱՐԻՒՆՀՈՍՈՒ-
ԹԻՒՆ.-** Ցանոտ արիւնհոսութիւն: Փո-
րի ստորին մասին դնել տաք կօմպ-
րէմներ կամ թէ տաք ջրով լի շիշեր: Լաւ
կը լինի բօմաշկա ծաղիկից Յ
թէյի գդալ եփել 4 բաժակ ջրում և
գոլ դրութեամբ կլիստիր դնել: Կարե-
լի է ընդունել նաև թեթև լուծողա-
կան, օրինակ մէկ հացի գդալ գէնա-
կէրչակի իւղ (խատօրօս մածո): Ճա-
ւերը հանգստացնում են հետևեալ կա-
թիլները:— դառն նշի կաթիլներից և
վալէրեանի կաթիլներից 15-ական ի-

բար խառնել քիչ ջրում և խմել:
5.

ԱՅՐՎԱԾՔ.—Երբ մարմնի վրայ աղդում է զօրեղ տաքութիւն, օրինակ կրակ, շիկացած առարկաներ, եռուն ջուր, տաք գոլորշի կամ այլրող դեղեր, այն ժամանակ տաքացած մասը հիւծվում է և այրվում։ Այրվածքը առաջացնում է սոսկալի ցաւ ու տանջանք, ուստի և անհրաժեշտ է շուտով օգնութիւն հասցնել։ Նախ պէտք է ասել որ այրվածքները լինում են մի քանի տեսակ, աւելի ճիշտը մի քանի աստիճանի։

Սուաջին աստիճանի այրվածք—երբ այրված մասը կարմրում և ուռչում է։ Երկրորդ աստիճանի այրվածք, երբ այրված կաշւի վրայ առաջանում են բշտիկներ հեղուկով և արիւնով լցված։ այս դէպքում կաշին աւելի է կարմըրում և ուռչում։ հիւանդը դպում է

սաստիկ ցաւեր։ Երրորդ աստիճան—երբ սաստիկ տաքութիւնը այրել և հիւծել է կաշին, միսը և երբեմն էլ ուկուրը։ Այսպիսի դէպքերում առաջանում են խոր վէրքեր։ այրված մարմի ցաւերն ու տանջանքները ան տանելի են։ Եթէ այրված տարածութիւնը մեծ է, այն ժամանակ հիւանդի դրութիւնը ծանրանում և վտանգաւոր է դառնում։ Այրվածքի դէպքում պէտք է օգնութիւն հասցնել հետևեալ կերպով։ Այրված կամ խաշված մասը շրբերից ազատել։ Եթէ այրվածքը առաջին աստիճանի է, այսինքն երբ միայն կարմրութիւն է առաջացել և ցաւ, խսկոյն ցանել սօղա և փաթաթել։ Կամ կարտոֆիլը կէս անել և կտրած կողմը դնել այրված տեղի վրայ ու կապել։ և կամ թէ կտաւատի ձէթ ու կրաջուր հաւասար չափով իրար խառնել ու քսել այրվածքին (այս խառնուրդը

պատրաստ կարելի է իսկոյն վերցնել դեղատնից. կոչվում է լատիներէն՝ limimentum calcareum. Բացի դրանցից կարելի է քաթանը թրչել արձճաջրում (свинцовая вода) և դնել այրվածքին, շուտ շուտ փոփոխելով:

Երկրորդ աստիճանի այրվածքի ժամանակ, այսինքն երբ այրվածքը առաջցրել է սաստիկ կարմրութիւն, արիւնաջրախառն բշտիկներ, նախ պէտքէ մաքուր քորոցով զգոյշ ծակուտել բշտիկները, միջի հեղուկը դուրս թողնել. միայն թէ կաշին երբէք չը պոկել. ապա ցանել սօդա կամ քսել գլիցէրին ու մաքուր բամբակ դնելով, փաթաթել. եթէ մինչեւ հետևեալ օրը ոչ մի ցաւ չզգացվի և թարախ չերեայ, այդ փաթաթածը կարելի է թողնել 3—4 օր. իսկ եթէ ցաւի և թարախ երևայ, այնուհետև պէտք է ամեն օր պղեսօտ մած քսել ու փաթաթել:

Երրորդ աստիճանի այրվածքի դէպում, այսինքն երբ մնասվել են կաշին, միսը, ոսկոռները և գոյացել խոր վէրքեր, լաւ կը լինի նախ այրված մասը երկար միջոց գոլ ջրում պահել. Յետոյ վէրքերի վրայ ցանել իոդօֆօրմ ու փաթաթել. Այնուհետև ամեն օր վէրքերը պէտք է զգուշութեամբ լուանալ բօրակաթթւի լուծվածքով (մէկ բաժակ տաք ջրում հալեցնել 2 թէյի գդալ բօրակաթթու և սառեցնել) և վրան իոդօֆօրմ ցանելով բամբակ դնել ու փաթաթել. Եթէ իոդօֆօրմի հուը դուր չէ գալիս, կարելի է քսէրօֆօրմ ցանել:

Եթէ ընդհանրապէս հիւանդը իրան վատ զգայ, ուժասպառ լինի, պէտք է խմացնել օրական երեք անգամ մէկ փոքրիկ բաժակ գինի կամ վալէրիանի կաթիլներից, օրական 3 անգամ 20-ական կաթիլ. Սաստիկ տաքութեան դէպում տալ առաւօտ և երեկոյ 5-

ական գրան խիսին (քինաքինա):

—ο—

Անցուցք:—Տես ՎիժնիՄՆ:

6.

ԱՆՔՆՈՒԹԻՒՆ.—Առաջ է գալիս զանազան հիւանդութիւններից: Ինչ էլ որ լինի պատճառը, պէտք է աշխատել մի կերպ օգնել, որովհետև անքնութիւնը մեծ տանջանքներ ու անհանդստեւթիւն է պատճառում: Պառկելուց առաջ չը պէտք է կերակուրութել (կերածը պէտք է լինի թեթև և դիւրամարս), ձու, մածուն և այլն, այն էլ պառկելուց 2—3 ժամ առաջ): Սենեակի օդը պիտի մաքրել պատուհանները բանալով. լաւ կը լինի ^{1/4—1/2 ժամ զբօսանք կատարել:} Եթէ կայ յարմարութիւն, պառկելուց առաջ ընդունել գոլ վաննա (30 %), մէջը նստելով 10—15 րոպէ: Կամ թէ խմել հատեալ դեղը:—Բրօմի աղից 8 գրամ

լուծել մէկ բաժակ հված սառը ջղի մէջ և ընդունել հացի գդալով օրական 3 անգամ:

7.

ԱԶԲԱՑԱԿ.—(Բորբոքում, կարմըութիւն, թարախանութիւն, արտասուք): Մէկ թէյի գդալ բօրակաթթու հալեցնել մէկ բաժակ տաք ջրում, սաւեցնել և սրանով օրական մի բանի անգամ լուանալ ցաւոտ աչքը: Կամ թէ մէկ հացի գդալ արճճաջուր լցնել մէկ բաժակ սառը մաքուր ջրի մէջ և սրանով աչքը լուանալ օրէնը միքանի անգամ: Աւելի լաւ է վերջին հեղուկից սառը կօմպրէս դնել աչքին: Խուսափել թողոտ տեղերից, ծխից և զօրեղ լոյսից:

8.

ԱՏԱՄՆԱՑԱԿ.—Եթէ ատամը փթել է և մէջը փոսիկ գոյացել, պէտք է մաքուր ատամնափորիչով փոսիկի մէջ

եղած կերակրի մնացորդները հանել, ապա բերանը ողողել գոլ ջրով կամ բօրակաթթուի գոլ լուծվածքով։ Յետոյ մի փոքրիկ կտոր մաքուր բամբակ թաթախել մեխակի իւղի մէջ (բազմագույնութեան) և դնել փոսիկը։ Լաւ կը լինի ցաւող ատամի տակ լոդերքին քսել կարմիր խօդ գլիցէրինի հետ խառնած։ Տասը ըոսկէ յետոյ բերանը ողողել։ Դրսից ցաւող ատամի թշի վրայ կապել տաքացնող կօմպրէս (տես կօմպրէս խօսքը)։ Փոխել Յ ժամը մէկ անգամ։ Վերջի վերջոյ անհրաժեշտ է դիմել ատամնաբուժի, որը ատամը կը մաքրէ և պլօմբ կը լցնէ, իսկ եթէ ատամը սաստիկ փթած և անպէտք է, կը հանէ

9.

ԱՐԵՒԱՀԱՐՈՒԻԹԻՒՆ.—Երբ արեւակը երկար ժամանակ ներգործում է մարմնի վրայ, առաջացնում է հիւան-

դութիւն—արեահարութիւն։ Արեւի գօրեղ ճառագայթների ազդեցութիւնից ուղեղի արեան երակները լայնանում են և լցվում մեծ քանակութեան արիւնով, որից կորչում է գիտակցութիւնը, մարդ վայր է ընկնում։ Արեահարութեան, առաջին նշաններն են—սաստիկ ծարաւ, թուլութիւն, սրտի թրթոց և արագ շնչառութիւն, գըլխապտոյտ, ականջների դժղժոց։ Երեսի գոյնը դառնում է մուգ—կարմիր, կաշին չորանում և տաքանում է։ Վերջի վերջոյ մարդ ուշը կորցնում է և վայր ընկնում։ Եթէ այսպիսի դրութեան մէջ օգնութիւն չը հասցնել, առաջ կը գան ցնցումներ, բերանում արնախառն փրփուր, շնչառութիւնը կանգ կառնի և ընկածը կարող է մահանալ։ Օգնութիւնը—արեահարվածին իսկոյն պէտք է տանել զով տեղ, շորերը հանել, պառկեցնել այնու

պէս, որ գլուխը բարձր լինի. սառը ջուր ցրցամ տալ երեսին և ամբողջ մարմին. զլիսին փաթաթել թաշկինակ, որի վրայ շարունակ սառը ջուր լցնել. եթէ ձեռքի տակ սառուց գտնվի, փշրել, լցնել տոպրակի կամ մի շորի մէջ և զլիսին դնել: Ոտքերն ու ձեռքերը շփել չոր մահուդով կամ հէնց ձեռքերով. քթին դէմ տալ նաշատիրի սպիրտ կամ թարմ տրորած խրէն: 20 կաթիլ Հօֆմանի հեղուկից (րօֆմահ-սկիա բառ) քիչ ջրով լցնել բերանը: Ուշի գալուց յետոյ եթէ հիւանդը խմել ցանկանայ, կարելի է տալ սառը ջուր մէջը լիմօնի հիւթ մզած:

10.

ԱՐԻԻՆՀՈՍՈՒԹԻՒՆ ԱԿԱՆՉԻՑ.— Հանգիստ մնալ. մի կտոր մաքուր բամբակ աղաջրում կամ շբաջրում թրչել ու զգուշութեամբ դնել ականջի անցքը. կարելի է վերեկց սառուց դնել: Ոչ մի

դէպքում չը պէտք է ականջ խառնել զանազան իրերով, կամ թէ պատահա-կան կաթիլներ կաթեցնել: անհրաժեշտ է մասնագէտ բժշկի դիմել:

—o—

Արիւնիոսուրին ամսական սաստիկ տես ԱՄՍԱԿԱՆ ՍԱՍՏԻԿ ԱՐԻԻՆ-ՀՈՍՈՒԹԻՒՆ:

—o—

Արիւնիոսուրին ամսական դժուար-տես ԱՄՍԱԿԱՆ ԴԺՈՒԱՐ ԱՐԻԻՆՀՈ-ՍՈՒԹԻՒՆ:

—o—

Արիւնիոսուրեան բացակայութիւնը.— տես ԱՄՍԱԿԱՆ ԱՐԻԻՆՀՈՍՈՒԹԵԱՆ ԲԱՑԱԿԱՅՈՒԹԻՒՆ:

11.

ԱՐԻԻՆՀՈՍՈՒԹԻՒՆ ԹՈՓԵՐԻՑ — (Արիւն թբելը): Թքի մէջ արիւն երեւալուն պէս ինկոյն և եթ պէտք է հանգիստ պառկել և բոլորովին չը

»

Խոսել: Կրծքի վրայ, որտեղ ցաւ կամ ծակոց է զգացվում, սառուց դնել: Բոլորովին չը պէտք է ուտել և խմել տաք բաներ, այլ ամեն ինչ սառը պէտք է լինի: Եթէ արիւնհոսութիւնը չը դադարի և աւելի շատանայ, կուլ տալ սառուցի փոքրիկ կտորներ, ուտել մարօժնի (պաղպաղակ): Մէկ հացի գդալ աղ հալեցնել կէս բաժակ ջրում և խմել: Հիդրաստի կաթիւներից (բալլ հաճար) ընդունել օրական 4 անգամ 15-ական կաթիլ: Առհասարակ թոքերի արիւնհոսութիւնը վտանգաւոր է և նշան է թոքախտի, որը կարող է սրբնթաց բնաւորութիւն ստանալ. ուստի լաւ կը լինի բժշկի դիմել:

12.

ԱՐԻՒՆՀՈՍՈՒԹԻՒՆ ՄԱՅԱՍԻԼԻՑ.
— Անմիջապէս պառկել անկողնում, հանգիստ մնալ: Արճճաջրում (ԵՎԻՆԴՕ-

ՎԱՅ ՎՈԴԱ) թրչած քաթան դնել յետանցքին և շուտ շուտ փոխել: Կամ մի բաժակ սառը ջրում հալեցնել կէս թէյի գդալ աղ, շիր կամ տաննին և սրսկել յետանցքը: Արգելվում է խմել գինի (մանաւանդ կարմիր), կծու, թթու և կոշտ կերակուր: Ուտել պէտք է թերխազ ձու, կաթ, մսաջուր, մածուն և հաւի շորվա: Եթէ փորը կապ է, խկոյն լուծողական խմել կամ թէ կլիստիր դնել: Սովորական փորակապութիւն ունեցողներին շատ օգտակար է առաւօտները անօթի փորին մի բաժակ հում սառը ջուր խմել, կամ թէ ամեն օր կլիստիր դնել 2 բաժակ սապնաջրով (սենեակի տաքութեան):

13.

ԱՐԻՒՆՀՈՍՈՒԹԻՒՆ ՍՏԱՄՈՔՍԻՑ
ԵՒ ԱՉԻՔՆԵՐԻՑ.— Անմիջապէս անկողնում պառկել մէջքի վրայ, չը շարժվել և փորին սառուց դնել: Ոչինչ

չի կարելի ուտել, բացի սառը կաթից, այն էլ արիւնը կանգնելուց յետոյ, կում—կում: Յետոյ ընդունել բիսմուտ (վիզմուտ) (դանակի ծայրով վերցնել մի քիչ և ջրով խմել 3 ժամը մէկ անգամ). կամ թէ գրպանի դանակի փոքրիկ ծայրով վերցնել ծեծած շիր (շատ չը վերցնել), չորս սրա չափ ծեծած շաքար, խառնել և ջրով խմել: (1 գրան շիր—4 գրան շաքար):

14.

ԱՐԻՒՆՀՈՍՈՒԹԻՒՆ ՎԵՐՔԵՐԻՑ ՈՒ ՃԱՆԳԻԹՎԱԾՔՆԵՐԻՑ.— Առհասարակ ամեն տեսակ արիւնհոսութեան ժամանակ պէտք է աշխատել շուտով կանգնեցնել արիւնը, որպէսզի սակաւարիւնութիւն կամ արիւնաքամութիւն չառաջանայ: Եթէ վէրթից կամ կըտրվածքից արիւնը ուժեղ հոսանքով դուրս է հոսում, պէտք է մաքուր մատով վէրքը սեղմել: Ապա մի կտոր

մաքուր բամբակ աղի, շրի կամ սկիպիարի մէջ թրչած դնել վէրքին և պինդ կապել: Վէրքը լուանալու համար գործածել բօրակաթթու կամ աղաջուր: Ճանգրթվածքներից արիւնը կանգնեցնելու համար լուանալ և վրան դնել երկաթապատ բամբակ (յօլքաւտայ բաւ) ու փաթաթել: Եթէ արիւնհոսութիւնը երկար է տևել և մարդուժասպառ է, իսկոյն խմացնել մեծ քանակութեամբ ջուր, կաթ և այլ հեղուկներ:

15.

ԱՐԻՒՆՀՈՍՈՒԹԻՒՆ ՔԹԻՑ.—Նախ և առաջ անհրաժեշտ է հանդսութիւն, չը քայլել: Փոքրիկ արիւնհոսութիւնը կանգնեցնելու համար պէտք է գլուխը բարձր պահել. մի կտոր մաքուր բամբակ ոլորել, աղաջրում կամ շրաջրում թրչել և քթածակը դնել (որ կողմից որ արիւնը գալիս է): Կամ թէ քիչ

Բկացաւ սովորական.—տես ԿՈԿՈՐԴԻ
ԲՈՐԲՈՔՈՒՄՆ

16.

ԴԼԽԱԾԱԽ: Գլխին դնել սառը կօմ-
պքէսներ, ճակատը և ամրողջ գլուխը
սզմած պահել բարակ կոռով կամ
բինտով. ճակատին քացախ կամ օղբ-
կոլօն քսել: Ապա խմել հետեւեալ դե-
ղերից որևէ մէկը. օրական 2 անգամ
ֆէնացէտին 6 գրան, խինին 5 գրան,
անտիպիրին 6 գրան, ասպիրին 5 գրան:
Եթէ զլխացաւը հետեւանք է բէվմա.
տիզմի և ցաւում են նաև յօդերն ու.
միւս մասերը, լաւ կը լինի ընդունել
սալիցիլեան նատր (салազալօնայ
նատր) & գրան, օրական 3 անգամ:
Եթէ զլխացաւը մշտական է և առա-
ջանում է սակաւարիւնութիւնից, ան-
հրաժեշտ է լաւ սնունդ—կաթ, ձու,
մածուն, կարագ, մնղր և այլն:

Հեր հալեցնել սառը ջրում և քիթը
քաշել. կարելի է նաև աղաջրով ողո-
ղել քիթը: Արիւնհոսութիւնը աւելի
շուտ կանգնեցնելու համար վերցնել
երկաթապատ բամբակ (յօթնաւու
թագա), որի մի կտոր ոլորել և կոխել
քթածակը: Եթէ քթի արիւնհոսութիւնը
շուտ շուտ է դրկնվում, լաւ կը լինի
դիմել մասնագէտ բժշկի, որովհետև
քթի խորքերում կարող է խոց կամ
ուսուցք լինել, որը և պատճառ է լի-
նում արիւնհոսութեան: Խսկ եթէ բժիշկ
չը կայ, կարելէ է միառում բամբակ
քիթը քաշել հետեւեալ փոշին: — մէկ
գրամ ծեծած շիր, մէկ գրամ բօրակա-
թթու, կէս գրամ տաննին, 10 գրամ
ծեծած շաքար իրար խառնել, լաւ
ծեծել, բարակ փոշի շինել և օրական
2—3 անգամ մի մի քիչ քթածակը
քաշել:

ԴիմՏէՐԻԾ.—(Երեխաների բկացաւ): Դիմտէրիտը սաստիկ վարակիչ հիւանդութիւն է, որով առաւելապէս հիւանդանում են երեխաները 2—7 տարեկան հասակում։ Վարակումը կատարվում է կամ անմիջապէս հիւանդին շփվելով և կամ հիւանդի շորերին դիպչելով։ Դիմտէրիտը երեկում է ամառթէ ձմեռ, անկախ եղանակներից։ Հիւանդութեան նշանները հետեւալներն են։—Վարակված երեխան զգում է ընդհանուր թուլութիւն, փոքր ինչ տաքութիւն, գլխացաւ։ հետզհետէ երեխայի զրութիւնը աւելի է վատանում, ախորժակը կորչում է, ստամոքսը խանգարվում։ Եթէ բերանը ուշադրութեամբ դիտէք, լեզուն թէյի պդալով վար սեղմելով, կը նկատէք, որ կատիկը մուգ—կարմիր գոյն է ստացել, լեզուակը և նշաճե գեղձերը

փոքրիչ ուռել են, որոնց վրայ երեսում է մոխրա—սպիտակագոյն փառ։ Առհասարակ դիֆտէրիտի ժամանակ երեխայի տաքութիւնը շատ չէ բարձրանում, ինչպէս ուրիշ հիւանդութիւնների ժամանակ. այս հանգամանքը և կատիկի մօտ սպիտակ փառը հեշտացնում են հիւանդութեան ճանաչելը։ Հետզհետէ կուլ տալը դժուարանում է և սրտի զարկը արագանում։ Եթէ հիւանդութիւնը շատ խորը չը գնայ, չը բարդանայ, 7—8 օրից յետոյ հիւանդ երնոյթները կը թուլանան և հիւանդը կառողջանայ։ Հիւանդութեան ծանր դէպքում բորբոքվում են մարմնի զանազան մասերը, օրգանները, որոնցից աւելի յաճախ և վտանգաւորն է կոկորդի ու սրտի վարակումը։ Երբ դիֆտէրիտի սպիտակ փառը ծածկում է կոկորդը, հիւանդի շնչառութիւնը դժուարանում է, հիւանդը չի կարողա-

նում հազար և կապուտկում է: Երբեմն
յանկարծ առաջ է գալիս սրտի պարա-
լիչ և հիւանդը մեռնում է: Հիւանդու-
թեան դէպքում իսկոյն պէտք է հի-
ւանդին առանձնացնիլ. եթէ կայ հի-
ւանդանոց, անմիջապէս ուղարկել այն-
տեղ, որովհետև հիւանդանոցում կան
բժշկութեան բոլոր յարմարութիւն-
ները և բացի այդ տան միւս երե-
խաներն ու մեծերը ազատ կը մնան
վարակվելու վտանգից: Մինչև հիւան-
դանոց տանելը կամ թէ բժիշկ հրա-
ւիրելը, ինչպէս ասացինք, անհրժեշտ
է ջոկ սենեակում պառկեցնել, օդը
մաքուր պահել և սենեակի աւելորդ
կահկարասիքը հեռացնել: Տան միւս
երեխաներին բոլորովին չը թողնել
հիւանդին մօտենալ: լաւ կը լինի նրանց
ուղարկել բարեկամի տուն մինչև հի-
ւանդի առողջանալը: Բերանը և կո-
կորդը ողողել հետևեալ լուծվածքով.—

մէկ թէյի գդալ բէրտօլէտեան աղ
(бертолетовая соль) մէկ բաժակ ջրում
հալած, կամ թէ կրաջրով ողողել. (ԱՅ-
ՎԵՍՏԿՈՎԱՅ ՅՈՒԴԱ): Թանի որ կուլ տալը
դժուար է, պէտք է ուտեցնել հեղուկ
կերակուրներ, օրինակ կաթ, թուլ
ձու, բուլիօն, հաւի շօրվա, մածուն և
այլն: Հիւանդի սպիտակեղէնն ու շո-
րերը պէտք է առանձին լուանալ, սօ-
դայի մէջ եփելով: Ներկայումս դիֆ-
տէրիտի դէմ կայ բաւական զօրաւոր
դեղ (հակադիֆտէրիտային շիճուկ),
որը եթէ սրսկվի հիւանդութեան ըս-
կզբին, կը փրկէ մահից: Այս դեղի
սրսկումը դժուար է և կատարում է
միմիայն բժիշկը: Առողջանալուց յե-
տոյ դեռ մէկ ամիս էլ պէտք է տանը
մնալ և ոչ ոքի հետ չը շփմել, որպէս-
զի չը մրսել և կամ ուրիշներին չը վա-
րակել:

Երազախար: Կարդա իմ կազմած
«Դաղտնի հիւանդութիւնների բժշկա-
րանը» գինը 50 կոպէկ.

18.

ԶԿՄՏԾՈՅՑ.—Եթէ զկոտոցը առաջա-
ցել է պատահաբար և ոչ թէ հետևանքը
է որկէ հիւանդութեան, իսկոյն պէտք
է մի քիչ հապարակ ջուր խմել կամ
թէ շաքարաջուր խմել քիչ ժամանակ
չնչառութիւնը պահել:

19.

ՀՆԿՆԵԽՈՐՈՒԹԻՒՆ.—(Էպիլէպսիա):
Նախ պէտք է աշխատել, որ ընկածը
ջարդվածքներ և այլ ֆնասներ չստա-
նայ, գլուխը, ձեռքերն ու ոտքերը քա-
րերին զարկելով: Եթէ ընկնեռը վայր
է ընկել փողոցում, սալայատակի վրայ,
իսկոյն պէտք է գլխի տակը շոր դնել
(վերարկու, պիջակ): Եթէ լեզուն մնա-
ցել է ատամների արանքում, պէտք է
գրալով կամ մի ուրիշ յարմար բանով

ծնօտները յետ քաշել և ատամների
յետեր զցել, Եթէ ընկածը սենեակումն
է գտնվում, իսկոյն պէտք է յարմար
պառկեցնել: Գլխի տակը բարձ դնել,
շորերի կոճակները արձակել, դոներն
ու պատուհանները բանալ՝ մաքուր
առաստ օդ տալու համար: Զղային ցըն-
ցումների ժամանակ հարկաւոր չէ ձեռ-
քերն ու ոտքերը բռնել, կամ թէ
սխմած բռունցքները բանալ, քթին
նաշատիւնի սպիրտ կամ ուրիշ բան
գէմ տալ. սրանցով ոչ մի օգնութիւն
չի լինի. այլ պէտք է աշխատել, որ
գլուխը քարի չը զարկէ և կամ լեզուն
չը կծէ: Ուշքի գալուց յետոյ պէտք է
բերանում և քթում երկցած փրփուրը,
լորձունքը սրբել և հանգիստ տալ
նրան, աշխատելով քնեցնել: Ընկնեռ-
ները չը պէտք է խմեն ոչ մի խմիչք,
մուգ թէյ, սուրճ, շօկօլադ, ծխախոտ:
Եթէ հիւանդը շուտ չուտ է ընկնում,

լաւ՝ կը լինի միաժամանակ ընդունել
հետևեալ դեղը: Բրոմի աղը (Natrum
bromatum) 8 գրամ լուծել մէկ բաժակ
եփած սառը ջրում և սրանից խմել
որէնը Յ անգամ մէկ հացի գդալ:

20.

ԹԱՐԱԽԱԿԱԼ ՈՒԾՈՒՑՔ.—Ուռուց-
ըը միշտ մաքուր պահել, գոլ ջրով
լուանալ-և մի փոքր բամբակ դնելով
փաթաթել: Եթէ արդէն ուռուցը հա-
սել է և մէջը թարախ հաւաքվել,
պէտք է մաքուր քորոցով ծակել, թա-
րախը դուրս թողնել, յետոյ գոլ ջրով
լուանալ, չորացնել բամբակով, ապա
քսիրօֆօրմ ցանելու փաթաթել: Այնու-
հետև ամեն օր պէտք է յիշեալ ձևով
լուանալ և փաթաթել, աշխատելով
ջուր կամ կեղու չը գցել վէրքի մէջ:
Լուանալու համար աւելի լաւ է մէկ
թէյի գդալ բօրակաթթու հալեցնել
մէկ բաժակ տաք ջրում և սառեցնե-
լուց յետոյ նրանով լուանալ:

21.

ԹՈՒՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԲԷՐՏՈԼԵՏԵԱՆ
ԱՂՈՎ.—Նշաններն են.—փորլուծու-
թիւն, շնչակապութիւն, մէզի մէջ
արիւն: Օգնութիւնը.—իսկոյն առաջաց-
նել փոխումն, տալ լուծողական, եթէ
փոխումը շատ երկար է տևում, կուլ
տալ փոքրիկ կտորներով սառոյց:
Խմեցնել մի բաժակ գինի կամ սուրճ:

22.

ԹՈՒՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԻՕԴՈՎ.—Ան-
միջապէս խմացնել մագնէզիա (յրե-
և և և մագնեզիա) մէկ թէյի գդալ մէկ
բաժակ ջրով: Ստամոքսի ցաւի դէմ
խմեցնել նշի կաթ (մաթձլինոս մօլոկո):

23.

ԹՈՒՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ ԼԵԱՊԻՍՈՎ.—
Նշանները.—բերանում երևում են այր-
վածքներ, ստամոքսում առաջանում են
սաստիկ ցաւեր, փոխումն, փորլուծու-
թիւն: Փոխած հիւթը սկզբում սպի-

տակ է լինում; իսկ յետոյ սևանում:
Օգնութիւնը. — անմիջապէս խմեցնել
մէկ հացի գդալ աղ մէկ բաժակ ջրով:
Յետոյ տալ կաթ կամ թէ ձուի սպի-
տակուց ջրում հարած:

24.

ԹՈՒՆԱՀՈՐՈՒԹԻՒՆ ԾԽԱԽՈՏՈՎ.

Ծխախոտի մէջ՝ գտնվում է մի տեսակ
թոյն, որ կոչվում է նիկօտին, Շատ
ծխելիս կամ թէ ծխախոտը ծամելիս
այդ թոյնը ծխի հետ մտնելով թոքերը
թափանցում է արեան մէջ և թշւնա-
ւորում մարմինը: Թունաւորման նշան
ները. — սրտախանութիւն, թքի առատ
հոսումը, գլխացաւ, գլխապառյա, քըր-
տինք, ոտքերի ու ձեռքերի գողդողոց,
լսողութեան ու տեսողութեան ծան-
րութիւն, փորլուծութիւն, սրտի թու-
լութիւն, արագացած դժուար շնչառու-
թիւն, գիտակցութեան խանգարումն,
պարալիչ և այլ երևոյթներ: Օգնու-

թիւնը. — թունաւորվածին անմիջապէս
խմեցնել լուծողական, յետանցքից
կլիստիր դնել, Յ բաժակ ջրի մէջ մի
քիչ քացախ խառնած: Սառը ջուր լըց-
նել գլխին, երեսին: Սրտի թուլու-
թեան դէպքում մի բաժակ գինի կամ
սուրճ խմեցնել:

25.

ԹՈՒՆԱՀՈՐՈՒԹԻՒՆ ԿԱՐԲՈԼԵԱՆ
ԹԹԻՈՒԹՈՎ. — Նշանները. — բերանի
նըրբաթաղանթը (կաշին) այրված է,
երևում են սպիտակ բշտիկներ: առաջ
է գալիս սաստիկ գլխացաւ, գլխա-
պտոյտ, սրտի թուլութիւն, շնչասպա-
ռութիւն: Եթէ խմած թթւուաը շատ
է եղել, թունաւորվածը կայծակնահ-
րի նման յանկարծ վայր է ընկնում և
ստամբսի այրումից առաջացած ցա-
ւերից սկսում է կծկրտվել, տանջվել.
մահը առաջանում է սրտի պարալիչից:
Օգնութիւնը. — Անմիջապէս պէտք է

Թունաւորվածի ստամբուլ լուանալ կաթով կամ կրաջրով (իհարկէ եթէ կայ բժիշկ կամ ֆէլդչէր), եթէ լուանալու. հնարաւորութիւն չըկայ, գոնէ պէտք է խմացնել մի քանի բաժակ կաթ. մարմինը շփել. եթէ կարբօլեան թթւուտից ընկել է աչքի մէջ, մի կտոր մաքուր բամբակ նշի կամ որևէ ուրիշ իւղի մէջ թաթախել ու զգուշութեամբ որբել աչքը:

26.

ԹՈՒՆԱԿԻՈՐՈՒԹԻՒՆ ԿՕԿԱԽՆՈՎ.—
Բացի գիտակցաբար թունաւորվելուց երբեմն ատամնացաւի ժամանակ ատամների մէջ կօկախն դնելով և յանկարծ կուլ տալով էլ են թունաւորվում. Նշանները.—բերանի զգայնութիւնը կորչում է. կոկորդում զգացվում է այրոց. առաջանում են հարփածութիւն, գունատութիւն, գլխացաւ, սրտի թրթոց, խօսակցութեան

խանգարումն, ցնցումներ, շնչառութեան դժուարութիւն. Օվնութիւնը.—առաջ բերել փոխումն, խմեցնել սպիտակ խօդ (8 դրամ սպիտակ խօդը լուծել մէկ բաժակ եփած սառը ջրում և իւրաքանչիւր 10 րոպէն մի հացի գղալ խմեցնել): Զօտկով կամ մահուրով շփել թունաւորվածի ձեռքերն ու ոտքերը, տաք ջրով լի շիշեր դնել ոտքերին:

27.

ԹՈՒՆԱԿԻՈՐՈՒԹԻՒՆ ՄԻՇԵԱԿՈՎ.—
(Մկնդեղով.) Նշաններն են.—սաստիկ ցաւ ստամբուլ, ծարաւ, սրտախառնութիւն, փորլուծութիւն, որից առաջացած կղկղանքը սաստիկ հոտած է լինում. զլխապտոյտ և այն: Օվնութիւնը.—կատիկը խտղտելով փոխումն առաջ բերել. դեղատնից վերցնել առուճութիւնը արսենից և այս գեղից խմեցնել իւրաքանչիւր 5 րոպէում մէկ հացի գղալ (ընդամենը տալ 15—20 գդալ):

կամ թէ տանը եթէ կայ այսուհան
մարդու ից մէկ հացի գդալ մէկ բա-
ժակ ջրում խառնել և 5 րոպէն մի ան-
դամ հացի գդալ խմեցնել։ Սօդա կամ
լիմօնադ երբէք չը տալ, վնաս է։

28.

ԹՈՒՆԱՀԻԹՐՈՒԹԻՒՆ ՄՈՐՁԻՎԸ ԵՒ
ՕԳԻՌՎ. — Նշաններն են. սրտախառ-
նութիւն, փոխումն, փորկապութիւն,
գլխապառյութ, զիտակցութեան կորուստ,
կաշին սառն է և գունատ. Օգնութիւնը.
— եթէ փոխումն չը կայ, պէտք է առա-
ջացնել՝ մատը կատիկին քսելով, տալ
լուծողական (մէկ հացի գդալ գէնա-
կէրչակի իւղ). ոտքերն ու ձեռքերը
շփել օղիով թրչած մահուդի կտորով,
գլխին սառը ջուր լցնել, արհեստական
շնչառութիւն առաջացնել (ձեռքերը
վեր բարձրացնելով, ու իջեցնելով սեղ-
մել կրծքին). քունքերին մի քանի
տղրուկ (սուլուկ) կպցնել. կլիստիր դնել

Յ բաժակ գոլ ջրով մէջը մէկ հացի
գդալ գէնահէրչակի իւղ խառնած,
փորի վրայ դնել մանանեխ (տես գար-
չիչնիկ խօսքը): Չը թոյլ տալ քնել:
Աղի ոչինչ չը տալ: Լաւ կը լինի հնա-
րաւորութեան դէպքում իսկոյն բժիշկ
հրաւիրել, որը դեղ կը սրսկէ թունա-
լորվածի կաշւի տակ:

29.

ԹՈՒՆԱՀԻԹՐՈՒԹԻՒՆ ՆԱՇԱՏԻՐԻ
ՍՊԻՐՏՈՎ. Անմիջապէս խմեցնել շատ
ջուր, մէջը մզելով լիմօնի հիւթ կամ
քիչ քացախ խառնած. կաթ. եթէ վըս-
խումն կայ, տալ սառուց փոքրիկ
կտորներով։

30.

ԹՈՒՆԱՀԻԹՐՈՒԹԻՒՆ ՆԱԻԹՈՎ. —
իսկոյն փախումն առաջացնել՝ կատիկը
խտղտելով. գլխին դնել սառը ջրում
թրչած քաթան կամ սառուցով պարկ:
Փորին դնել գարչիչայի խմոր (գորչի-
կամուկ)

ԱԱԵՒ): Զեռքերն ու ոտքերը շփել
օգըկօլօնով կամ քացախով: Խմեցնել
մի բաժակ գինի:

31.

ԹՈՒՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՊՂՆՉՈՎ.—Զը
կլէկած և ժանգոտված պղնձնիրում
կերակուր պատրաստելիս, պղնձի ար-
տաղրած թոյնը կերակրի հետ մտնում
է ստամոքս և թունաւորում մարմինը:
Պղնձեղէն ամանների մէջ երբէք չը
պէտք է կերակուր թողնել երկար ժա-
մանակով: Լաւ կը լինի կերակուրը
դատարկել ապակէ կամ ֆարֆօրի ա-
մանի մէջ: Պղնձով թունաւորման
նշաններն են.—բերանում պղնձահամ,
փսխումն կանաչ մաղձախառն, փորա-
ցաւ, փորլուծութիւն, որի ժամանակ
երևում է արիւն, դեղնութիւն, շնչա-
սպառութիւն, սաստիկ ծարաւ, գլխա-
պտոյտ, ուժասպառութիւն և այլ հի-
ւանդ երևոյթներ: Օգնել պէտք է իս-

կոյն, առանց ուշանալու, ապա թէ ոչ
մահը շուտ կը հասնի: Կաթի մէջ
ծգել ձուի սպիտակուցը, լաւ հարել,
փրփրեցնել և խմեցնել, առաջ բերել
փսխումն. կարելի է տալ այսուհայ
մարհեզիա—մէկ թէյի գդալ մէկ բաժակ
ջրով: Եթէ հնարաւորութիւն կայ, լաւ
կը լինի բժիշկ հրաւիրել ստամոքսը
լուանալու համար:

32.

ԹՈՒՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՍՈՒԼԵՄԱՅՈՎ.
—Նշանները.—բերանում մետաղի համ,
սաստիկ թքահոսութիւն, ցաւեր կո-
կորդում և ստամոքսում. ապա սրտա-
խառնութիւն, յաճախ արիւնախառն.
փորլուծութիւն արիւնախառն, ցաւոտ
միզահոսութիւն. թունաւորվածի ու-
ժերը արագ թուլանում են, կաշին
գումատվում, ուշաթափութիւն և մահ:..
Օգնութիւնը.—անմիջապէս ձուի սպի-
տակուցը հարել գոլ ջրում և խմացնել.

փսխումն առաջացնել կոկորդը խտըղ-
տելով։ Յետոյ տալ մէկ թէյի գդալ
մագնէզիա (յրլոքաւայ մարհօթիա) կէս
բաժակ ջրով։ Հիւանդի կերակուրը
պիտի լինի բուլիօն և կաթ։

33.

ԹՈՒՆԱԾԻՌՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՆԿԵՐՈՎ.

— Սունկերի բոլոր տեսակներն էլ չի
կարելի ուտել. նրանց մէջ կան այն-
պիսիները, որոնք մտնելով մարմնի
մէջ, թունաւորում են և մահ պատ-
ճառում։ Նոյնիսկ խակ և կամ փթած
սունկերն էլ են թունաւորում։ Սուն-
կերով թունաւորման նշանները շատ
նման են խօլերայի նշաններին—այս-
ինքն առաջացնում են սրտախառնու-
թիւն, փսխումն, փորլուծութիւն, սաս-
տիկ փորացաւ, ծարաւ, շնչարգելու-
թիւն, զղային ցնցումներ և գիտակ-
ցութեան մթնացումն։ Այսպիսի դէպ-
քերում անհրաժեշտ է գիտենալ օգ-

նուրիւն տալը, քանի որ սունկ ճանա-
չելը դժուար է և բացի այդ սունկի
շատ զործածական լինելու պատճա-
ռով վաճառականները թունաւոր և
վատ սունկերը խառնում են լաւերի
հետ։ Բացի այդ գիւղերումն էլ գիւղա-
ցիք մօտակայ անտառներից շուտ շուտ
սունկ քաղելով երբեմն սխալմամբ
կամ չը ճանաչելով քաղում են թու-
նաւոր տեսակներից և ուտում։ Օգ-
նուրիւնը. — սունկով թունաւորման
դէպքում իսկոյն պէտք է մատը տա-
նել կատիկը և փսխումն առաջ բերել,
որպէսզի ստամոքսում գտնվող և գեռ
արեան մէջ չըծծված թոյնը դուրս
հանվի. ապա շուտով պէտք է լուծո-
ղական խմել. (մէկ հացի գդալ ան-
գլական աղ) (անգլիակայ օօլյ) մէկ
բաժակ ջրում։ Ապա տրվում է խմե-
լու համար գինի, սուրճ, Հօֆմանի
կամ Վալէրիանի կաթիւներ (20-ական

կաթիւ քիչ ջրով); Գլխին պէտք է դնել
սառը ջրում թրչած քաթան, որը
պէտք է շուտ շուտ փոխել:

34.

ԹՈՒՆԱՀՈՐՈՒԹԻՒՆ ՍՏՐԻԽՆԻՆՈՎ.
—Նշանեերն են —սաստիկ ցաւեր ամ-
բողջ մարմնում, դժուար շնչառութիւն;
Օգնութիւնը.—թունառվածին հան-
գիստ դրութիւն տալ, քիչ շարժել,
ապա թէ ոչ ցաւերը կըսաստկանան.
հիւանդի մօտից բուրին հեռացնել և
նրա մօտը չը խօսել.^{1/2} թէյի գդալ
տաննին (タバシヌヌ) կէս թէյի բաժակ
ջրում խառնել և խմացնել: Կամ թէ
շուտով գեղատնից վերցնել մէկ դրախմ
խլորալ հիդրատ և կէս բաժակ ջրով
խմացնել միանգամից: Վերջը կարելի
է տալ լուծողական, որպէսզի թոյնի
մնացորդը դուրս ենչ ստամոքսից:

||

35.

ԹՈՒՆԱՀՈՐՈՒԹԻՒՆ ՏՐԻԽԻՆԱՆԵ-
ՐՈՎ.—Խոզի մսի մէջ երբեմն գտնվում
են մի տեսակ մանր որդեր, որոնք
կոչվում են տրիխինաներ: Սրանք հա-
սարակ աչքին անտեսանելի են և ե-
րեսում են միմիայն խոշորացոյցի տակ:
Երբ մարդ ուտում է տրիխինայով
վարակված միսը, տրիխինաները մըտ-
նում են ստամոքս և արագ բազմա-
նալով տարածվում են մարմնի մէջ ու
թունառում: Այնուհետև առաջ է
գալիս փորացաւ, փորլուծութիւն, փըս-
խումն: Հիւանդը ցաւեր է զգում մար-
մնի զանազան մասերում, այնպէս որ
ամեն մի շարժումն սաստկացնում է
ցաւերը, ուստի հիւանդը ստիպված է
լինում անշարժ մնալ անկողնում: Հետզդ-
հետէ դժուարանում է ծամելը և կուլ
տալը, մարմինը ուռչում է, սիրտը
թուլանում, տաքութիւնը բարձրա-

նում. գլխացաւը նեղացնում է հիւանդին, որը վերջապէս զառանցում է և կորցնում գիտակցութիւնը:

Օգնութիւնը.—Հէնց որ խոզի միս ուտելուց յետոյ մարդ թունաւորվի, իսկոյն պէտք է տալ զօրեղ լուծողական, (մէկ հացի գդալ անգլիական աղմէկ բաժակ ջրում). լաւ կը լինի նախ առաջացնել փսխումն՝ կատիկը խորդտելով։ Ապա իւրաքանչիւր $\frac{1}{2}$ ժամը մի անգամ խմեցնել 4 կաթիլ սկիպիտար (ֆրանցուակի և սկիպիտար) կաթով։ Երկու ժամից յետոյ մէկ հացի գդալ սովորական աղ մի բաժակ ջրում հալեցնել ու խմեցնել։

Տրիխինաներով վարակվելուց զգոյշ լինելու համար անհրաժեշտ է, որ քաղաքների բնակիչները գնեն խոշորացրով գիտած և որոշ կնիք կամ պլոմբ ունեցող խոզի միսը, իսկ գիւղերում, որտեղ գդալ կամ

միսը զննողներ, խոզի միսը երկար և լաւ պէտք է եփել, ապա ուտել։ Գիտնալու է, որ արիխինաները երկար եփվելիս մեծ տաքութիւն ազդեցութեան տակ սատկում են և այնուհետև ստամոքսը մտնելով չեն թունաւորում մարմինը։

36.

ԹՈՒՆԱԼԱԿՈՐՈՒԹԻՒՆ. ՓԶԱՑԱԾ ԿԱԼ-ԲԱՍՈՎ.—Պէտք է գիտենալ, որ հին և փշացած կալբասի մէջ գոյանում է մի տեսակ թոյն, որը կալբասի հետ մրտնելով մարմի մէջ թունաւորում է։ ուստի միշտ պէտք է խոյս տալ հին և շատ էժան կալբասներից։ Թունաւորման նշանները—սրտի գդալի տակ ցաւեր և ձնշումն, սրտախառնութիւն, փսխումն, փորլուծութիւն, ընդհանուր թուլութիւն։ լեզուն չոր, երբեմն մարմի վրայ դուրս է գալիս ցան (ԸԱՊ): Օգնութիւնը.—առաջացնել փսխումն

մատով կատիկը խտղտելով. տալ լուծողական (գէնակէրչակի իւղ մէկ կամ երկու հացի գդալ). ապա խմեցնել սև սուրճ, գինեխառն լիմօնադ. մարմինը քացախով շփել: Եթէ փսխումը երկար շարունակվի, կուլ տալ սառոյցի կտորներ:

37.

ԹՈՒՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՔԱՑԱԽՈՎ ԵՒ ՔԱՑԱԽԻ ԷՍԵԿՆՅՑԻԱՅՈՎ, ՔԱՑԱԽԱԹԹԻՈՒԹԻԾՈՎ.—Նշանները.—Բերանից քացախահոտ, կոկորդում և ստամոքսում ցաւեր, փորլուծութիւն, փըսխումն, ծարաւ, ուժասպասութիւն: Օգնութիւնը.—խմեցնել մեծ քանակութեամբ ջուր հետը խառնած մէկ գդալ մագնէզիա (углекислая магнезия):

—ο—

ԹԳՆԱԿԱՐԱՐԻՒՆ օպիումով — տես ԹՈՒՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՄՈՐՖԻՈՎ:

38.

ԹՈՒՆԱԻՈՐՈՒԹԻՒՆ ՖՈՍՖՈՐՈՎ.
—Մեծ մասամբ տեղի է ունենում ինքնասպանութեան նպատակով (լուցկիների գլխիկներով, մկների համար պատրաստած ֆոսֆորէ խմորով և այլն): Նշաններն են:—այրոց և սաստիկ ցաւեր ստամոքսում, զկոտոց, ծարաւ, փսխումն, բերանից փչում է սխտորի հոտ. արտաթորութիւնը և փսխածը նոյնպէս սխտորի հոտ են արձակում և մթութեան մէջ փայլում են. առաջանում է արիւնախառն փորլուծութիւն, տաքութիւն, բրտինք և միզելիս ցաւ է զգացվում: Օգնութիւնը.—Բունաւորվածին իսկոյն տալ լուծողական կամ առաջ բերել փսխումն, մատը կատիկին քսելով. (գէնակէրչակի իւղ չի կարելի տալ այլ խմացնել անգլիական աղից (անգլիակա օոլ) մէկ հացի գդալ մէկ բաժակ ջրում): Իւղեղէն

և կաթնեղէն չը տալ, Կարելի է մսա-
ջուր, թերխաշ ձու:

39.

ԽԵՂԴՈՒՄՆ ԿԵՐԱԿՐԻՑ.—Պատա-
հում է, որ ուտելու ժամանակ չը ծա-
մած մսի կամ հացի մեջ կտոր կուլ է
գնում և կանգնում որկորի վրայ.
Պրանից ճնշվում է շնչափողը և շնչա-
ռութիւնը կտրվում, այդպիսով մարդ
խեղդվում է: Այդպիսի դէպքում, ա-
ռանց շփոթվելու, ձախ ձեռքով գլուխը
բռնել, իսկ աջ ձեռքի երկու մատը
ներս տանել բերանը, լեզուի յետերի
կողմը շօշափել և մատների տակ ըն-
կած կտորը գգուշութեամբ դուրս քա-
շել:

40.

ԹԱԿՈՑՆԵՐ ԱՂԻՔՆԵՐՈՒՄ. —Փչա-
ցած կերակուրը մտնելով ստամոքսը և
աղիքները սաստիկ գրգռում է նրանց
թաղանթը և առաջացնում ծակոցներ,

ուժեղ յաւեր (ժողովրդի լեզւով սան-
ճու): Բացի փչացած կերակրից աղիք-
ների ճիճուները և մի քանի տեսակ
ներքին դեղեր նմանապէս պատճառ
են դառնում ծակոցների: Օգնութիւնը.
—Եթէ ծակոցների պատճառը փչացած
կերակուրն է, անմիջապէս պէտք է
լուծողական ընդունել, որպէսզի աղիք-
ներից դուրս վլոնդել գրգռիչ կերա-
կուրը. ծակոցներն ու ցաւերը հան-
գստացնելու համար պէտք է անմի-
ջապէս փորի վրայ տաք բան դնել.
օրինակ, տաքացնող կօմպրէս (տես
այս խօսքը), շիշերով տաք ջուր, տա-
քացրած ծեծած աղ. Ներսից ազդելու
համար խմել բուշշկա ծաղիկի կամ
սամիթի (ցերոպ) և կամ թէ քիմօնի
(ՏՄԻԵՒ) տաք թէյ: Կարելի է փորը թե-
թև կերպով շփել, մասսած անել: Եթէ
ծակոցները առաջանում են ստամոք-
սում գտնվող խոցից և արտաթորու-

թեան մէջ արիւն է երևում, այսպիսի
դէպքերում զգոյշ պէտք է լինել տաք
բաներից, որոնք կարող են արիւնհո-
սութիւնը աւելացնել. լաւ կը լինի
դիմել բժշկի:

41.

ԾԱԿՈՑՆԵՐ ԵՐԻԿԱՄՈՒԽՆՔՆԵՐՈՒԽՄ
(պոչեանա քօլիք) առաջ են գալիս,
երբ երիկամունքների մէջ աւազ կամ
քարեր են գոյանում: Երբ աւազի հա-
տիկը միզատար խողովակների միջով
անցնում է, առաջ է բերում սոսկալի
ծակոցներ, անտանելի ցաւեր. հիւան-
դի մարմնին պատում է սառը քրտինք,
տաքութիւնը բարձրանում է և երբեմն
մարդ ուշաթափվում է: Օգնուքինը —
անմիջապէս շիշերով տաք ջուր կամ
թէ ծեծած տաք աղ պարկով զնել
երիկամունքների վրայ (մէջքի երկու
կողմերին, քիչ յետև): Բաւական թե-
թութիւն է տալիս 30 աստիճանի

տաք վաննան: Խմեցնել մէկ բաժակ
պրօվանսի իւղ, որը կը հեշտացնէ քա-
րերի ու աւազի անցնելը միզատար
խողովակներում:

42

ԾԱԿՈՑՆԵՐ ԶԻԳԵԱՐՈՒԽՄ.—ԵՐԲԵԹԻ
ջիգեարի մէջ գտնվող լեղիի պարկում
գոյանում են մանր քարեր կամ աւազ:
Երբ սրանք լեղիի հետ ընկնում են
լեղատար խողովակը, առաջացնում են
սոսկալի ցաւեր, ծակոցներ, այն աս-
տիճան սաստիկ, որ մարդ աննկարա-
գւելի տանջանքներ է քաշում, սառը
քրտինքով ծածկվում և մահվան զգա-
ցումով լցում: Երբեմն էլ անտանելի
ծակոցներից նա ուշաթափվում է:
Առաջ է գալիս սրտախառնութիւն,
դեղնութիւն: Օգնուքեան համար իս-
կոյն պէտք է տաք լրով լիբը շիշեր
դնել փորին, ջիգեարի վրայ (փորի աջ
կողմին) կամ տաքացրած ծեծած աղ և

կամ թէ տաք ջրով կօմպրէսներ: Ցաւերը հանգստացնելուց յետոյ կարելի է խմացնել մի բաժակ պրօվանսի իւղ կամ թէ 2 բաժակ այս իւղով տաք կլիզմա դնել:

43.

ԿԱԽՎԱԾԻՆ 04ՆԵԼԸ.—Զգուշութեամբ արձակել պարանոցը սղմող թուկը և ցած իջեցնել, աշխատելով վայր չը դցելանրան: Ապա հանել շորերը, դուրս տանել մաքուր օդի մէջ և կամ սենեակի դրներն ու պատուհանները բանալ, դիակը պառկեցնել այնպէս, որ գլուխը մարմնից բարձր լինի. այնուհետև պէտք է արհեստական շնչառութիւն առաջացնել. (կանգնել գլխի յետնի կողմը, բռնել ձեռքերի արմունկներից, վեր բարձրացնել և վայր իջեցներով սեղմել կրծքին, այսպէս շարժել մի || ըոպէում 15—20 անգամ). միաժամանակ շփել մարմինը, սառը

ջուր ցրցամ տալ երեսին, կրծքին, քթին դէմ տալ նաշատիրի սպիրու, երբ որ կախվածը, ազատվելով մահից, ուշքի գայ, իսկոյն խմբցնել սուրճ, թէյ, գինի կամ գարեջուր:

44.

ԿԱՅՈՒԱԿՆԱՀԱՐՈՒԹԻՒՆ.—Այառը, փոթորկի ժամանակ, կայծակը յաճախ զարկում է մարդուն: Եթէ կայծակը ամբողջովին ընկնում է մարմնի վրայ, սպանում է. իսկ երբ մասամբ միայն հարվածում է և կամ մարդուն մօտիկ տարածութեանն է զարկում, առաջացնում է անզգայութիւն և ուշաթափութիւն: Առասարակ կայծակի զարկած դէպքերում պէտք է հետևեալ կերպ վարվել. — կայծակահարվածին մերկացնել, պառկեցնել այնպէս, ո՛չ գլուխը բարձր լինի մարմնից. ապա սառը ջուր շաղ տալ գլխին, կրծքին և արաղով կամ քացախով արորել

քունքերը (ականջի առաջի մասերը),
մէջքը, կուրծքը, ոսները. բթին դէմ
տալ նաշատիրի նպիրտ կամ նոր քե-
րած խրէն:

45.

ԿՈՐՐԴԻ ՀԱՍԱՐԱԿ ԲՈՐԲՈՐՈՒՄՆ (ԲԿԱՑԱԼ ՀԱՍԱՐԱԿ).—Երբ որ հի-
ւանդը կուլ տալիս ցաւեր է զգում և
երբ նրա կատիկը կամ լեզուի յետևի
մասը կարմրած է, պէտք է դրսից,
պարանոցի վրայ, տաք ջրում թթչած
շոր փաթաթել (տաք կօմպրէս), որը
փոխել օրական երեք անգամ: Ապա
բերանը և կոկորդը ողողել օրական
4—5 անգամ լիմօնի հիւթը մէջը քա-
մած ջրով, կամ թէ քացախախառն
ջրով: Եթէ կոկորդում ուռուցքը մեծ
է և կուլ տալուն բաւական խանգա-
րում, այն ժամանակ կոկորդին՝ լեզուի
արմատին զգուշութեամբ քսել կար-
միր իօդ և զիցէրին հաւասար չափով

իրար խառնած, եթէ թեթև մրսելուց
կամ առանց մրսելու կոկորդը շատ
շուտ շուտ է ուռչում, լաւ կը լինի դի-
մել մասնագէտ բժշկի, որը մի փոք-
րիկ օպէրացիայով կը հեռացնէ կո-
կորդի խուլերը և կամ թէ էլէքտրա-
կանութեամբ կայրէ նրանց. այնուհե-
տև բկացաւ համարեա չի լինի:

46.

ԿԱՏԱՂԱԾ ՇԱՆ, ԶԻՈՒ, ԿԱՏՈՒԻ
ԵՒ ՈՒՐԻՇ ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ԿԾԱԾԸ. —
Կատաղած կենդանիների թքի մէջը
գտնվում է թոյն, որը մտնելով մար-
դու արեան մէջ, առաջանում է բա-
ւական ծանր հիւանդութիւն: Կծելուց
մի քանի շաբաթ, երբեմն էլ ամիս-
ներ, յետոյ առաջանում են ցնցում-
ներ, ցաւեր կուլ տալիս, նամանա-
ւանդ ջուր և այլ հեղուկներ խմելիս:
Հիւանդը ջրից վախենում է, ուստի և
այդ հիւանդութիւնը կոչվում է ջրվա-

խութիւն։ Օզնութիւնը.—կծելուց անմիջապէս յետոյ առողջ բերանով պէտք է ծծել կծած տեղը և թքել. (իհարկէ յետոյ պէտք է լաւ ողողել բերանը բօրակաթթուի լուծվածքով)։ Եթէ բերանում ճանգրթվածք կայ և անկարելի է ծծել, այն ժամանակ պէտք է բանկա դնել վէրքին՝ թոյնը դուրս ծծելու համար։ Արիւնհոսութիւնը չը պէտքէ շուտ կանգնեցնել։ Լաւ կը լինի կծած վէրքը այրել, ինչով որ կարելի է, օրինակ շիկացած մեխով, պապի-րոսով, լեապիսով և այլն։ Սկզբնական այս միջոցները գործածելուց յետոյ հիւանդին անպայման պէտք է ուղարկել Պաստէրեան հիւանդանոց, որտեղ հիւանդին կը պատվաստեն, որով նա մահից կազատվի։ Ոչ մի դէպքում չը պէտք է կանգ առնել հեռաւորութեան կամ ծախսի դիմաց. հակառակ դէպքում անկարելի է մահից ազատվել։

Խուսաստանում Պաստէրեան հիւանդանոցներ կան հետևեալ քաղաքներում, որտեղ կատարում են պատուաստումներ՝ կատաղութեան դէմ. — Աստրախան, Վիլնա, Կիեվ, Վարչաւա, Եկատէրինոսլաւ, Կազան, Մօսկվա, Պէրմ, Սամարա, Պետերբուրգ, Սարատով, Տուլա, Ռոֆա, Խարկով, Օդէսսա, Բուտով Դոնեան, Թիֆլիս, Վլադիվոստոկ, Տօմսկ, Տաշկէնտ։

47.

ԿԱՐԻՃԻ ԿԾԱԾԼ. — Անմիջապէս լւանալ նաշատիրի սպիրտով, յետոյ սառը պրիմօչկաներ դնել կէսը քացախ կէսը ջուր իրար խառնած։ Եթէ տաքութիւն առաջանայ, կարելի է խմեցնել 8 գրան սալիցիլիեան նատր (սալիցիլատ)։ Երեխաներին 2 գրան։

48.

ՀԱԶ. — Երբ հազը սաստիկ է և հա-

զալիս շատ թուք (խորխ) է գալիս, պէտք է մի թէյի գգալ զտած սկիպիտար (օճառենայ և սկսած մի բաժակ տաք ջրի մէջ և զրա գուրշին շնչել: Իսկ երբ հազը չոր է, այսինքն խորխ չը կայ և կամ շատ քիչ է գալիս, կէս բաժակ սէլտէրսկի ջուրը խառնել կէս բաժակ տաք կաթի հետ և խմել: Լաւ կը լինի առաւօտ և երեկոյ կը քիչն քսել սկիպիտար և տաք շորով փաթաթել: Եթէ այս սիջոցներով հազը չէ անցնում, դեղատնից վերցնել ճ-ական զրան Դօվէրի պարագոկ (доверовъ порошокъ) և ընդունել օրական Յ հատ, առաւօտեան, ճաշին և երեկոյեան:

—ο—

Մայասիլ: Տես իմ կազմած Փաղտնի իիւանդուք. բժշկարանկ» գինը 50 կոպ.

49.

ՀԱՐՓԱՆԾՈՒԹԻՒՆ.—Ոգելից լիմիչք-

ները (գինի, արաղ, գարեջուր, լիկեօր և այլն) քիչ և չափաւոր գործածութեամբ օգտակար են կազմվածքի համար: Նրանք ուրախ են տրամադրում, նպաստում են մարսողութեանը, թուլակազմերին ուժ տալիս և այլն: Սակայն չափազանց խմելը, ընդհակառակն, մեծ ֆնամեր է տալիս. թէ մարմնին և թէ հոգուն. կործանում է անհատի և ընտանիքի երջանկութիւնը: Ո՞ւմ յայտնի չեն հարփիցողութեան հետևանքները: Կամքից զուրկ մարդը մի բաժակ գինի խմելով. տրամադրութիւնը փոխում է, և նա խմում է երկրորդը, երրորդը և հետեւեալ բաժակները: Նա դառնում է չափաղանց զուարթ, շատախօս, պարում է առանց երաժշտութեան ձայն լսելու, շատերն, ընդհակառակն, խմելով դառնում են մելամաղձոտ, լաց են լինում և իսկոյն խոր քնի մէջ ընկնում: Եթէ այսպիսի

դրութեամբ շարունակում է խմել, դրութիւնը վտանգաւոր, է դառնում՝ նրա երեսը կարմրում է, բերանում երևում է փրփուր, շնչառութիւնը դժուարանում և խոխումէ: Մրտի գործունէութիւնը թուլանում է, տաքութիւնը պակասում, առաջանում է փսխում: Եթէ խմողը առողջ կազմվածքի տէր է, այսպիսի դրութեան մէջ կարող է մնալ 8—10 ժամ: Մթափվելուց յետոյ զգալի է գլխացաւ և յօդնածութիւն. լինում են սրտախառնութիւն և փսխում: Իսկ թոյլ կազմվածքի տէր մարդը յիշեալ դրութեան մէջ մնալու առանց օգնութեան, կարող է մեռնել, ուշը չը գալով: Իրար յետևից շարունակ այսպէս ծանր հարբելը շատ կործանիչ հետևանքներ է ունենում: Արբեցողը զգպում է կերակրից և ոչինչ չէ ուտում. նա շարունակ խնդրում է գինի, օղի, սակայն չի կարո-

դանում շատ խմել. նրա ոտներն ու ձեռքերը դրդողում են, քունը փախչում է. քնած թէ արթուն՝ տեսիլներ է տեսնում. նրա ականջին լսելի են լինում ինչ որ ձայներ (ոչ իսկական): Նա գրգովում է, կատաղում և ձեռքն ընկած դանակով կամ իրերով յարձակվում է պատահած մարդու վրայ կամ թէ իրան է զարկում. հէնց այսպիսի բովզներին են անձնասպան լինում հարբեցողները: Օգնութիւնը: — Եթէ փսխում չը կայ, պէտք է առաջ բերել կատիկը խաղտելով, որպէսզի ստամոքսում եղած խմիչը դուրս թափվի և չը ծծվի արեան մէջ: Կրծքի շորերը թուլացնել պառկեցնել՝ գլուխը մարմից բարձր դնելով: Գլխին դնել սաւը ջրում թրչած քաթան, որը շուտ շուտ պէտք է թրչել. կարելի է տոպըրակով սառուց դնել. ձեռքերն ու ոտքերը պէտք է շփել կոշտ շորի կտորով, չօս-

կով կամ հէնց դատարկ ձեռքերով։
Եթէ սրտի գործունէութիւնը թոյլ է
և զարկերակը անշօշափելի, փոքր ինչ
ուշքի բերելով պէտք է խմեցնել մէկ
բաժակ սև սուրճ (առանց կաթի),
մէջը կաթեցնել 8 կաթիլ նաշատիրի
սպիրտ (զգոյշ աւել չը լցնել)՝ Եթէ
խմեցնելու հնարաւորութիւն չը կայ,
կարելի է քթին դէմ տալ նաշատիրի
սպիրտ։ Իսկ երբ առաջանայ ալկօհօլի
տէնդախտը, այսինքն հարբածն սկսէ
կատաղի գործողութիւններ կատարել
և վտանգաւոր դառնալ, լաւ կը լինի
երեսսրբիչներով կապել նրա ձեռքերն
ու ոտքերը. (շատ պինդ չը սեղմել,
որպէսզի արիւնը կանգ չառնէ)։ Ապա
պէտք է լուսութիւն պահել սենեակում,
աւելորդ մարդկանց հեռացնել, յանդի-
մանութիւն և վիճաբանութիւն չանել։

50.

ՀԱՐՓՈՒԽ. — Հարփուխը առաջ է գա-

լիս մեծ մասամբ մրսելուց, աւելի յա-
ճախ աշնանը և գարնանը, փոշի շըն-
չելուց, զանազան գաղերից, տաք ու
սառը օդից և այլն։ Հարփուխն է առա-
ջանում նաև զանազան հիւանդութիւն-
ների միջոցին, օր. կարմրուկ, դիֆ-
տէրիտ, տիֆ, կապոյտ հազ և այլ
հիւանդութիւնների ժամանակ։ Հիւան-
դի քիթը փակվում է, քթով չնչելը
դժուարանում, ընդհանուր տրամա-
դրութիւնը վատանում, զգացվում են
ցաւեր անդամների մէջ, ախորժակը
կորչում է, տաքութիւնը փոքր ինչ
բարձրանում։ Յետոյ քթից սկսում է
ս պատ քթալորձունք հոսել, լինում է
շուտ-շուտ փոշտոց և այլն։

Հարփուխից բժշկվելու համար աւե-
լի լաւ է միքանի օր տանը մնալ,
առաւօտ և երեկոյ ընդունել իսինին
5-ական գրան։ Առաջին օրը գիշերը
քնելուց առաջ խմել երկու բաժակ

մալինի տաք թէյ, գիշերը լաւ բըրտնել, (սպիտակեղէնը թրչվելիս փոփոխել): Ընդհանրապէս գլուխը տաք պահել: Խրօնիքական և հոտած հարփուխ ունեցած դէպքում աւելի լաւ է դիմել բժշկի:

51.

ՄԱՏՆԱՇՈՒԽԶ.—Փոքրիկ կտոր բամբակ կամ մաքուր փալաս թրչել բօրսկաթթուի լուծվածքի մէջ (2 թէյի գդալ բօրսկաթթու (борная вислота) հալեցնել մէկ բաժակ տաք ջրում) կամ թէ հէնց արագի մէջ, դնել ցաւող մատին, վրայից փոքրիկ կլէօնկա կամ մոմած թուղթ, ապա մի կտոր չոր բամբակ և փաթաթել. իւրաքանչիւր 3 ժամը մի անդաս փոխել: Կամ թէ ցաւող մատը դնել տաք սասլնաջրի մէջ 5—10 րոպէով և հէնց որ ջուրը սառչի, նորից տաքացնել: Եթե եղունկի տակում թարախակալել է, բայց

անցք չէ բացվել, պէտք է մաքուր բըրոցի ծայրով զգուշութեամբ ծակել, թարախը դուրս թողնել (թեթև սեղմելով): Շուտ հասցնելու նպատակով աւելի լաւ է դեղատնից վերցնել 1% լիազօնակ քաշով թաշանած բամբակ փաթաթել մատին և կօմպրէս կապել: Թարախը դուրս գաւլուց յետոյ կարբոլիան իւղում թաթախած բամբակ կապել (բարబոլովօն մածո): Առհասարակ պէտք է մատը մաքուր պահել, լուանալ 2%, կարբոլիան թթւուտի լուծվածքով, կամ թէ բօրսկաթթուի 4% լուծվածքով և կամ թէ հէնց գոլ ջրով: Եթէ մատնաշնչի ժամանակ տաքութիւնը բարձրանում է և ցաւերը տարածվում են ամբողջ թեկի մէջ, լաւ կը լինի գիշերը քնելիս ընդունել 5 գրան խինին (խինին):

52.

ՄԵՂՈՒԻԻ ԿԾԱԾՀ.—Խայթած տեղին

քսել նաշատիրի սպիրտ կամ քացախ
և կամ օդըկօլօն։ Կարելի է ընդունել
սալիցիլիտն նատր (սալիցիլովան
նատր) 5 գրան։

—ο—

Շանկր փափուկ և կոշտ.—կարդա իմ
կազմած «Գաղտնի հիւանդուքին ների
բժշկարանը», գինը 50 կոպէկ։

53.

ՇՆԶԱՐԳԵԼՈՒԹԻՒՆ.—Շատ հիւան-
դութիւնների և փորձանքների ժամա-
նակ յանկարծ զժուարանում է շնչելը
և առաջանում է խեղդումի նման ե-
րևոյթ։ Շնչարգելութիւն պատահում
է աւելի յաճախ թոքերի հիւանդու-
թիւնների ժամանակ։ (Թոքերի բոր-
բոքում, պլէվրիտ, արագընթաց թո-
քախտ)։ Վտանգաւոր շնչարգելութիւն
լինում է նաև արեան անկանոն շըր-
ջանառութեան, սրտի և երիկամունք-
ների հիւանդութեանց միջոցին։ Ինչ

էլ որ լինի շնչարգելութեան պատ-
ճառը, օգնութիւնը միատեսակ է։
Նախ պէտք է հիւանդին նստեցնել և
առատ մաքուր օդ հայթհայթել։ Գար-
չիչնիկ կացնել մէջքին, ոտքերի փա-
փուկներին, կրծքին դնել չոր բան-
կաներ (տես այս խօսքը), ոտքերն ու
ձեռքերը դնել տաք ջրի մէջ։ Երբ
շնչարգելութիւնը առաջ է գալիս սրտի
թուլութիւնից, պէտք է խմեցնել մուգ
թէյ, սուրճ կամ գինի։

—ο—

Ոչլուսուրին։ —Կարդա իմ կազմած
«Գաղտնի հիւանդուքին ների
բժշկա-
րանը», գինը 50 կոպէկ։

—ο—

Ոտքերի քրտինքը եւ հոտը.—Տես իմ
կազմած «Գաղտնի հիւանդուքին ների
բժշկարանը», գինը 50 կոպէկ։

—ο—

ՈՒԾՈՒՅՑՔ ԹԱՐԱԽԱԿԱԼ.—Տես բարախակալ ուսուցք:

54.

ՈՒՂԵՂԻ ՑՆՑՈՒՄ.—Երբ մարդ բարձը տեղից վայր է ընկնում, առաջ է գալիս մարմի ցնցում. իսկ եթէ ընկնելու ոյժը շատ մեծ է, ուղեղի զօրեղ ցնցումից պատահում է ուշագնացութիւն: Ուղեղի ցնցում առաջ է գացնակ նաև գլխին կպած ուժեղ հարուածից, բօթելուց, քաշելուց և այլն: Երբեմն ընկնելիս արտաքին կամ ներքին ոչ մի գործարան չէ մնասվում կամ վիրաւորվում, բայց և այնպէս առաջանում է ուղեղի զօրեղ ցնցում և ուշաթափութիւն: Ուղեղի ցնցումից կարող է մահ առաջանալ: —Օգնութիւնը: —Եթէ վայր ընկածի ուշը գնացել է, աէտք է ուշը բերել, վարվելով այնպէս, ինչպէս սովորական ուշադափութեան ժամանակ, այսինքն

կուրծքը բանալ, սառը ջուր ցանել երեսին, կրծքին, ոտներն ու ձեռքերը շփել. քթին դէմ տալ նաշատիրի սպիրտ կամ թունդ քացախ: Ապա անկողնուժ պառկեցնել, գլխին դնել սառուց փոքրիկ տոպղրակով, կամ թէ սառը ջրուժ թրչած քաթան, որը շուտ-շուտ թրչել: Սենեակում պահպանել կատարեալ լուսութիւն, լոյսը պակսեցնել վարագոյններով: Խմեցնել վալէրեանի կաթիլներից 25. կաթիլ բիչ ջրով:

55.

ՈՒԾԱԹԱՓՈՒԹԻՒՆ.—Առաջ է գաւիս զանազան պատճառներից, օրինակ սաստիկ ցաւերից, ուժասպառութիւնից, արինաքամ լինելուց, քաղցից, երկիւղից, վայր ընկնելուց, ցնցումից և ուրիշ շատ գէպքերում: Թեթև ուշաթափութեան միջոցին մարդ զգում է թոյլ գլխապառյատ, սրտի բարախում, ականջներում զժժոց, սրտախառնու-

թիւն, փսխումն, գունատութիւն շըն-
չառութիւնը և սրտի զարկը դանդա-
ղում են. յաճախ մարդ վայր է ընկ-
նում, առանց գիտակցութիւնը կոր-
ցնելու. Աւելի զօրեղ ուշաթափութեան
դէպքում յիշեալ երևոյթներն էլ խիստ
են լինում, շնչառութիւնը և սրտի
զարկը համարեա աննշմարելի են դառ-
նում. գիտակցութիւնը կորչում է և
մարդ նմանում է մեռած դիակի: Ու-
շաթափութիւնը տեսում է միքանի բո-
պէից մինչև մէկ ժամ և երբեմն աւե-
լի: Օգնութիւնը: Շրջապատողները չը
պէտք է շփոթվեն, լաց կոծ անեն,
թողնելով ուշաթափվածին առանց օգ-
նութեան և կամ անօգուտ կերպով
քաշկոտեն նրան: Գիտնալու է, որ շատ
ծանր ուշաթափվածներն անդամ մեծ
մասսամբ ուշքի են գալիս, չեն մեռնում.
ուշաթոփութիւնից մահը շատ հազիւ
է պատահում, այն էլ այն ժամանակ,

երբ ուշաթափվածին առանց օգնու-
թեան են թողնում: Գիտակցութիւնը
չը կորցրած ու թեթև ուշաթափված-
ները իրանք իրանց էլ ուշքի են գա-
լիս: Առհասարակ ուշաթափվածին իս-
կոյն աէտք է ձեռքերի վրայ տանել
մաքուր օդի մէջ, պառկեցնել, կոճակ-
ները արձակել, կուրծքը ազատ թողնել.
ապա սառը ջուր ցանել երեսին, կրծք-
քին. քունքերը շփել քացախով, օդը-
կօլոնով, արաղով և կամ հէնց սառը
ջրով: Ականջները թեթև քաշել, ձեռ-
քերն ու ոտքերը շփել. ըթին զգուշու-
թեամբ դէմ տալ նաշատիրի սպիրտ
(գիտնալու է, որ նաշատիրի սպիրտը
թունաւոր է, ուստի զգոյշ լինել բե-
րանի, աչքի կամ քթի մէջ թափե-
լուց): Հէնց որ ուշաթափվածը փոքր
ինչ ուշքի գայ, խմեցնել է փիլնօ-վա-
լէրեանի կաթիլներից 25-կաթիլ ըիչ
ջրով (թփրիօ-բալերիանօվայ ճառաւ).

չեղած դէպքում կարելի է խմեցնել
գինի, թունդ սուրճ, մուռգ թէյ:

56.

ԶԱՐԴՎԱԾՔ, ՀԱՐՎԱԾՔ.—Նախ պէտք
է ջարդված կամ ծեծված մասին հան-
գիստ դրութիւն տալ: Եթէ ծեռըն է
ջարդվել, պէտք է վզից երեսարբիչ
կապել և ծեռըն մէջը դնել: ուաքի
ֆսասված դէպքում պէտք է ուտքը
բարձր պահել, տակը բարձ դնելով:
Եթէ կուրծքն է ֆսասվել, պէտք է
նստած լինել, որպէսզի շնչառութիւնը
ազատ լինի: Կրծքի ջարդվելուց յետոյ,
երբ թոքերից արիւն գայ, վարզել
այնպէս, ինչպէս ասված է թոքերի
արիւնհոսութեան համար (տես արիւն-
հոսութիւն թոքերից զլուխը): Փորի
ջարդված դէպքում պէտք է կիսանստած
դիրք ընդունել և ուաքերը դէպի առաջ
ծալել, երբ գլուխն է դիպել և ուշըն
դնացել, պէտք է պառկեցնել այնպէս,

որ գլուխը և բունը բարձր լինի մար-
մի ներքենի մասից: Այնուհետեւ շատ
զգոյշ, առանց աւելորդ անգամ չարչա-
րելու ֆսասվածին, պէտք է ուշքի բե-
րել, ուտքերը և ձեռքերը հանգիստ կեր-
պով շփելով: Գլուխը որևէ բանի դիպ-
չելիս և ուշաթափվելիս լաւ կը լինի
ոչինչ չը դէմ անել քթին հոտոտելու
համար. այլ աշխատել մաքուր օդ հայթ-
հայթել և հանգիստ թողնել. փոքր
ինչ յետոյ նա ուշքի կը գայ: Մարմնի
բոլոր ջարդվածքների ժամանակ ջար-
դված տեղի վրայ դնել սառուց (տոպ-
րակով): և կամ թէ սառը ջրում թրչած
քաթան, որը շուտ շուտ թրչել Աւելի
լաւ է հասարակ ջրի փոխարէն վեր-
ցնել արձնաջուր (СВИВЦОВАЯ ВОДА),
սրանով ցաւերը շուտ են հանգստա-
նում և ուռուցքը իջնում է, որից և
կապուտկութիւնն էլ անհետանում է:

գլուխը և կուրծքը մարմնից ցածր լինեն, բերանի, քթի և ականջների միջից շտապով մաքրել աւազը, ցեխը։ Ապա փետուրով կատիկը խղաղտել (խտիտ տալ) փսխումն առաջ բերելու համար։ Այնուհետև անմիջապէս պէտք է արհեստական շնչառութիւն տալ այսպէս։—մէկը պէտք է կանգնէ խեղդվածի գլխավերեսում, խեղդվածի ձեռքերը վեր բարձրացնէ և իջեցնելով սղմէ նրա կրծքին, այսպէս անընդհատ կատարէ մի բոպէտում 15—20 շաբժում։ Արալով ոտները, կուրծքը և փորը շփել։ Երբէք չը պէտք է կորցնել համբերութիւնը և յոյսը, խեղդվածին կենդանացնելու համար, պատահում է, որ մօտ կէս ժամ շաբունակ այս խորհուրդները կատարելուց յետոյ է միայն խեղդվածը ուշի գալիս, Տղէտ ժողովրդի մէջ կայ սովորութիւն, որ խեղդվածին գլուխնիվայր

57.

ԶՂԱՅԻՆ ՑԱԼԻԵՐ ԵՒ ԾԱԿՈՑՆԵՐ.— Սակաւարիւն, մաշված և յոգնած մարդոց մարմնի զանազան մասերում երբեմն յանկարծ տուաջ են գալիս ջղային ցաւեր, որոնք բաւական անհանգստութիւն են պատճառում։ Այսպիսի դէպքերում կարելի է ընդունել ճ գրան հետեւեալ դեղերից որևէ մէկը—ասպիրին, ֆէնացէտին, պիրամիդօն, խինին (քինաքինա), եթէ ցաւերը այս ու այն կողմ չեն տարածվում, այլ կենդրոնացած են մի տեղում, կարելի է տաքացնող կօմպրէսներ դնել (տես այս խօսքը)։

58.

ԶՐԱԽԵՂԴԻ ՄԱՐԴՈՒՆ ՕԳՆԵԼԸ.— Երբ ջրախեղդ մարդը ջրի տակը մնացել է կէս ժամից ոչ աւելի, յոյս կայ նրան կենդանացնելու։ Զրից հանելով խեղդվածին պառկեցնել այսպէս, որ

քարշ են անում և հարում են ու լաւ ծեծում, այսպիսով խեղղվածի կենդանութեան վերջին թելն էլ կտրում են: Խելացի միջոցներով խեղղվածին ուշը բերելուց յետոյ պէտք է խմեցնել տաք թէյ, սուրճ կամ արադ: Լաւ կը լինի մի քիչ ժամանակ պառկեցնել տաք անկողնում և մարմինը թեթև կերպով շփել:

59.

ՍԱՌՄԾԻՆ ՕԴՆԵԼԸ. — Սաստիկ ցուրտը երկար ժամանակ ազդելով մարմնի վրայ արիւնը յետ է քշում երակներից: սառած մասը զրկվելով արիւնից, մնում է առանց մնունդի և հետզհետէ անզգայնում, մեռնում է: Կարող է սառչել մարմնի որևէ մասը կամ ամբողջ մարմինը: Սառչելու դէպքեր աւելի շատ պատահում են գիւղերում, դաշտերում և սարերում: Երբեմն էլ մեծ քաղաքներում հարբե-

ցողները գիշերը փողոցներում ընկնելով, սառչում են: Օգնութիւնը Սառածին պէտք է զգոյշ վերցնէք, առանց ուժեղ շարժումների և ձեռքերը կամ ոտքերը չը ծալել, ապա թէ ոչ նրանք ապակու նման կը կոտրվեն ու մարմից կը բաժանվեն: Եթէ ճանապարհին է սառել, պէտք է շատ զգոյշ վերցնել, զնել սահնակի վրայ ու տանել գիւղ կամ քաղաք: Ապա նրան պառկիցնել հով սենեակում (երբէք չի կարելի սառածին միանգամից տաք սենեակ մտցնել): և հանել շորերը, ձեռքով կամ սառը ջրով արագ—արագ, միախ զգոյշ, շփել ոտքերն ու ձեռքերը: Երբ որ մարմնի փետութիւնը (կարծրութիւնը) անցնի, փափկանայ, շփելու ջուրը մի-քիչ տաքացնել (ոչ շատ տաք, այլ գոլ): Մարմնի փափկութիւնից յետոյ պէտք է արհեստական շնչառութիւն առաջացնել հետե-

ւեալ ձեռվ.—մէկը կանգնում է սառածի գլխի յետնում, բռնում է ձեռքերի արմունկներից, բարձրացնում է և իջեցնելով սղմում կրծքին. այսպէս մի բոպէում 15—20 անգամ. Հէնց որ սառածը ցոյց տայ կենդանութեան նշաններ, նրան պառկեցնել անկողնում, զոլ ջրով մարմինը շփել մինչև լաւ ուշքի գալը, սենեակի տաքութիւնն էլ կամաց-կամաց աւելացնել։ Ապա պէտք է խմեցնել տաք սուրճ, թէյ, գինի կամ գարեջուր։ Քթին դէմ տալ նաշատիրի սպիրտ, Եթէ ուշքի գալուց յետոյ մարմնի որևէ մասը մնայ սառած, պէտք է այդ տեղին բսել կամֆօրնի իւղ (Կամֆօրոս մածո) և բամբակ դնելով՝ փաթաթել։ Եթէ այսուհետև տաքութիւն և դող առաջանայ, տալ օրական երկու անգամ 5-ական գրան խինին,

—ο—
Սանճու. —տես ՓՈՐԱՑԱՒ,

—ο—

Սուսունակ. —տես իմ կազմած «Դադտնի հիւանդութիւնների բժշկարանը», գինը 50 կոպէկ։

—ο—

Սիֆիլիո. —տես յիշեալ գիրքը՝
60.

ՄՐՏԱԽԱՐՆՈՒԹԻՒՆ. —
Առաջանում է ստամոքսի, աղիքների, աղիքաթափութեան, թունաւորման, երիկամունքների բորբոքման, գլխի և ողնուղեղի, ջիգեարի, փայծաղի և այլ հիւանդութիւնների ժամանակ։ Օգնութիւնը—կուլ տալ սառուցի կտորներ, խմել սօղայի կամ սէլտէրեան ջուր, Գօֆմանի կաթիլներից 20 կաթիլ քիչ ջրով։

61.

ՄՐՏԻ ԹՈՒԼՈՒԹԻՒՆ. — Մրտի և այլ

հիւանդութիւններից սիրտը թուլանում է: Վատ սնունդը, երիկամաւնքների բորբոքումը, դողերոցքը, տաքութիւնը և այլ մաշող ցաւեր նոյնպէս պատճառ են դառնում սրտի գործունէութեան անկանոնութեանը: Սրտի թուլութիւնը իմացվում է զարկերակով, չնչասպառութեամբ և ընդհանուր թուլութեամբ. կաշին ծածկվում է սառը քրտինքով: Օգնութիւնը—իսկոյն խմեցնել վալէրեանի կաթիւներից 20 կաթիլ քիչ ջրով: Եթէ ոտքերը սառն են, տաք ջուր դնել շիշերով, կարելի է խմեցնել մուգ թէյ, սուրճ, մի բաժակ դինի կամ շամպանսկի:

62.

ՄՐՏԻ ԹՐԹՌՈՅՑ-ԲԱԲԱԽՈՒՄՆ.— Անմիջապէս պառկել, հանգիստ մնալ. կրծքի վրայ շորերի կոճակները քանդել, աղատ չնչելու համար: Սրտին դնել սառը ջրում թրչած շոր կամ թէ

տոպրակով սառուց: Լաւ են ազդում վալէրեանի կաթիւները՝ 10-կաթիլ քիչ սառը ջուր. կամ թէ ընդունել նշի ջուր (вода горькаго мандаля) 20-ական կաթիլ օրական երեք անգամ: Օգտակար կը լինի խմել լիմոնի հիւթով ջուր կամ թէ սէլտէրեան ջուր: Եթէ սրտի թրթոոցը շատ շուտ շուտ է կրկնվում և վերոյիշեալ դեղերը չեն ազդում, գործածել հետեւալ դեղը. ութը գրամ բրօմի նատրը (брոմистեն բատր) հալեցնել մէկ բաժակ եփած ու սառեցրած ջրում և ընդունել իւրաքանչիւր 2 ժամը մէկ հացի գդալ:

63.

Վ.Ա.Խ.—Վախեցածին նստեցնել, հանգստացնել, սառը ջուր խմեցնել: Եթէ սիրտը թրթոում է, տալ 20 կաթիլ վալէրեանի կաթիւներից: Եթէ այնուհետև վախեցած մարդու ջղերը չեն հանգստանում և լինում են ջղային

ցնցումներ, անհանգիստ և զարհութելի
երազներ, խմեցնել հետևեալ դեղը.

Rp. Natri bromati.

Kali bromati аâ 2,0

Aq. destillatt. 200,0.

MDS. По стад. ложка в черевъ 2
часа: Այս գեղից ընդունել 2 фасад մի
անգամ հացի գդալով:

64.

ՎԻԺՈՒԵՆ, ԱՆՑՈՒՑՔ.—Եթէ յդի
ժամանակ վայր ընկնելուց և այլ պատ-
ճառներից սկսվի արիւնհոսութիւն և
վիժումն, իսկոյն պէտք է պառկել և
հանգիստ մնալ, քիչ շարժվել. Արիւնը
կանգնեցնելու համար պէտք է իօդո.
Փորմով թաթախած մարլի (իօդօֆօր-
մայ մարլ) զգուշութեամբ ներս կո-
խել հիւանդի բունոցը, իհարկէ առա-
ջուց ձեռքերը մաքուր լուալուց յետոյ,
եթէ մարլի չը կայ, կարելի է վերց-
նել մաքուր բամբակ, գունդ գունդ

ոլորել, թել կապել և մէկ մէկ ներս
հրել իւրաքանչիւր գունդ բամբակի
թելը դրսից քարշ թողնել, որպէսզի
յետոյ կարելի լինի դրւոս քաշել: Բացի
այդ ընդունել հիդրաստի կաթիներից
օրական 4 անգամ 20-կան կաթել: Ոչ
մի դէպքում չը դիմել տնային տգէտ
հէքիմների, որոնք մեծ վտանգի միայն
կենթարկեն հիւանդին: Եթէ արիւնը
շարունակում է հոսել, հանգիստ պառ-
կել մէջքի վրայ և պարկով սառուց
դնել փորին: Տաք կերակուր կամ
խմիչք չի կարելի, ամեն ինչ սառը
դրութեամբ ուտել:

65.

ՓՈՐԱՑԱԻ, ՍԱՆՑՈՒԻ.—Փորին դնել
տաք կօմպրէմներ (տաք ջրում թրչել
չորս տակ ծալած երեսսրբիչ և
քամել) կամ թէ տաք ջուր շիշերով,
տոպրակով տաք մոխիր, ծեծած տաք
աղ, տաքացրած աղիւս շորում

վաթաթած և այլն: Վալէրեանի 10 կաթիլ և մեատնի 10 կաթիլ իրար խառնել քիչ ջրում և խմել (այսպէս օրական չորս անգամ): Կարելի է խմել բօմաշկա ծաղիկից տաք թէյ, կամ թէ մի բաժակ սովորական տաք թէյ մէ ջը լցրած մէկ թէյի դդալ կօնեակ: Եթէ ցաւերը չեն անցնում, պօրտից վերև դնել գարչիչնիկ (տես այս խօսքը):

— o —

Փսխումն.—տես ՄՐՏԱԽԱՌՆՈՒԹԻՒՆ:

66.

ՓՈՐԼՈՒՒԹԻՒԹԻՒՆ.՝Պատահումէ բաղմաթիւ պատճառներից: Փչացած միսը, թթված կաթը, խակ մրգերը, փթած ձուկը, կծկած պանիրը, փչացած կալբասը և այլ թոյներ գրգռելով և զնաւելով ստամոքսի ու աղիքների պատերը, առաջացնում են բորբոքում և փորլուծութիւն: Ամառը փուլուծու-

թիւն աւելի է լինում: Մըսելը նոյն պէս պատճառ է դառնում լուծողութեան: Լուծողութիւնը կատարվում է օրական 2—20 անգամ: Լուծելիս լինում են ցաւեր, սանճու և ծակոցներ փորի մէջ: Երկար տևող լուծողութիւնը նիւարեցնում և մաշում է մարմինը: Օգնութիւնը:—Անմիջապէս պէտք է պառկել և ոչինչ չուտել: Եթէ փորլուծութիւնը առաջացել է փչացած կերակրից: Հընայած լուծողութեանը, իսկոյն պէտք է 2 գդալ գէնակէրչակի իւղ (касторовое масло) խմել, որպէսզի փչացած կերակրի մնացորդները շուտ դուրս գան աղիքներից: Փորի ցաւերն ու սանճուն հանգստացնելու համար պէտք է տաք ջրում թրչած քաթան դնել փորին, վրայից կլէօնկա կամ մոմած թուղթ, ապա տաք բրդէ շալով փաթաթել: Կարելի է շիշերով տաք ջուր դնել. կամ թէ տաքացրած աղիւս

շորում փաթաթած: Վերջի վերջոյ լուծողութիւնը կանգնիցնելու համար ընդունել Սալիկիցիան բիսմուտ (Սալպավուայ անումայ) 8 գրան, օրէնը 3 անգամ: Կամ թէ մի քիչ ջրի մէջ կաթեցնել 7-ական կաթիլ Վալէրեանի, Մեատնի և Օպիի կաթիցներից և խառնած խմել: այսպէս կրկնել օրական 3 անգամ: Միքանի օր շարունակ ոչինչ չուտել, բացի տաք բուլիօնից (մսա-ջուր), հաւի շօրվայից, սպիտակ հացի սուխարից, եփած կաթից, թերխաշ ձուրից և տապակած վառիկից: Առողջանալուց յետոյ լաւ կը լինի մի ամիս շարունակ փորը տաք փաթաթած պահել:

Կայ և փորլուծութեան վատ, վարակիչ տեսակը, որը կոչվում է փորհարինը (դիզէնտէրէա): Այս դէպքում ցաւը լուրջ է: Դիզէնտէրէան ճանաչելը դժուար չէ—հիւանդի արտաթո:

րութեան մէջ լինում է արիւն և թարախ: Լուծողութեան ժամանակ լինում են սաստիկ նքումներ: Հիւանդը քրտնում է և աչքերից արտասուք թափում: Այս տեսակ հիւանդի լուծած արտաթորութիւնը վարակիչ է, ուստի պէտք է զգոյշ լինել և արտաթորութիւնը հեռու տեղ թափել ու վրան չը հանգած կիր ցանել: Այսպիսի դէպքում լաւ կը կլինի բժշկի դիմել: իսկ մինչեւ բժշկի գալը, վերոյիշեալ օգնութիւնը տալ:

—ո—

Քամստոքիւն.—տես իմ կազմած «Գաղտնի հիւանդութիւնների բժշկարանը» գլուխ 50 կոպէկ,

67.

ՕԶԻ ԿԾԱԾՀ.—Թունաւորման նշանները.—կծած տեղում սաստիկ ցաւ, շուրջը կարմրութիւն, ուռուցք, երբեմն փոքրիկ աշխանհոսութիւն: Կծելուց

մօտ 2 ժամ յետոյ առաջանում է շընչասպառութիւն, յոգնածութիւն, զլխապտոյտ, սրտախառնութիւն, գլխացաւ, սաստիկ ծարաւ, միզակապութիւն, ուշաթափութիւն, ջղային ցնցումներ, զառանցանք և այլն: Օգնութիւնը: Կըծելուց անմիջապէս յետոյ պէտք է կծած տեղից մի քիչ վերև պինդ կապել (եթէ ոտքն է կամ ձեռքը): Ապա բերանով (բերանում չը լինի ոչ մի վէրք կամ բերծվածք) դուրս ծծել վէրքից թոյնը և թքել. կարելի է ծծելու փոխարէն բանկա կպցնել: Ծծելուց յետոյ վէրքը լուանալ նաշատիրի սպիրտով, կամ 5% կարբօլեան լուծվածքով. կարելի է լեապիսով կամ վառած պապիրոսով այրել վէրքը: Յետոյ վէրքի վրայ դնել սառը կօմպրէս (տես այս խօսքը), որը չուտ շուտ փոխել: Խմել 3 ժամը մի անգամ վալէրեանի կաթիլներից 20 կաթիլ:

—ο—

Օնանականութիւն.—կարդա իմ կաղմած «Դաղտնի հիւանդութիւնների բժրշկարանը» գինը 50 կոպէկ:

68.

ՄԱՀՎԱՆ ՂԸՆՆԵՐԸ

Լինում են դէպքեր գիւղերում և խուլ անկիւններում, երբ տղիտութեան շնորհիւ թաղում են կենդանի մարդուն, մեռած համարելով: Լետարգիական քնի մէջ ընկած կամ թէ ծանը ուշաթափութեան ենթարկված մարդը նմանվում է մեռածի, այսինքն երեսը գունատվում է, ձեռքերն ու ոտքերը սառչում են, զգացուկութիւն կորչում և նոյնիսկ սրտի բարախումն ու շնչառութիւնը աննկատելի դառնում: Մինչդեռ մարդը մեռած չէ, այլ ժամանակաւորապէս ընկել է այդ դրութեան մէջ: Ուստի նման դէպքերում

կենդանի մարդուն մեռածի տեղ չըն-
դունելու և կենդանի կենդանի չը թա-
ղելու համար, անհրաժեշտ է իմանալ
իսկական մահվան նշանները: Ընդհա-
նուր նշանները. — Սրտի լիսակտար
կանգնումը, որ իմացվում է ականջը
ձախ ծծի տակ դնելով: Շնչառութեան
ընդհատումը, որ իմացվում է սառը
հայելին բերանին ու քթին մօտեցնե-
լով, (հայելին գոլորշիով չէ ծածկվում)
կամ թէ բերանին մօտեցնել վառած
մոմ, որի բոցը չէ շարժվում: Մեռածի
ձեռքը ճրագի դիմաց բռնած միջոցին
թափանցիկ չէ, մատների արանքում
կարմիր գոյն չէ ստացվում, ինչպէս
կենդանի մարդու ձեռքի մէջ: Մեռածի
մարմինը բոլորովին սառն է լինում,
մսերը թուլացած և զգայնականու-
թիւնը անհետացած:

Իսկական մահվան աձենամեծ նշան-
ները հետևեալներն են.—

1. մարմի փէտացումը: Մահվան
ժամին թուլացած մսերը մի քանի ժամ
յետոյ պնդանում են, փէտանում, այս-
պէս որ դժուար է լինում ձեռքը կամ
ոտքը ծալել:

2. Դիակի բծեր են գոյանում մար-
մի զանազան մասերին:

3. Աչքի բիբը փափկանում է:

4. Վերջի վերջոյ դիակը փթում է.
դիակից տարածվում է մի տեսակ հոտ.
բերանից ու քթից հոսում է գարշելի
հոտ ունեցող լորձունք:



ՑԱՆԿ

ԵՐԵՒ

I.	Յառաջաբան	
II.	Օգտակար դիտելիքներ .	7
	1. Բնաւագատ անել կամ փաթաթել	8
	2. Բանկաներ	9
	3. Գարչեչնիկ	10
	4. Կլիստիր (լուծողական և դեղային)	11
	5. Կօմպրէս—սառը	12
	6. Կօմպրէս—տաքացնող .	12
	7. Մըսկումն կամ լուացումն .	14
III.	Տնային դեղարան	15
	1. Անգլիական լուծողակա- կան աղ	17

2.	Արձճաջուր	17
3.	Բէրտոլէտեան աղ	17
4.	Բրոմի նատր	18
5.	Բօրակաթթու	18
6.	Գէնակէրչակի իւղ	18
7.	Գլիցէրին	19
8.	Գօֆմանի կաթիլներ	20
9.	Դառը նշի ջուր	20
10.	Երկաթապատ բամբակ .	20
11.	Իխօդի հեղուկ, կարմ. իօդ	21
12.	Իօդօֆօրմ	21
13.	Խինին	22
14.	Մեատնի կաթիլներ	22
15.	Մեխսակի իւղ	22
16.	Նաշատիրի սպիրտ	23
17.	Շիր	23
18.	Սպիցիլեան նատր	24
19.	Սօղա	24
20.	Սկիպիտար	24
21.	Վալէրիանի կաթիլներ .	25
22.	Տանին	26

ԵՐԵՍ

23. Ռօմաշկա	26
24. Ծինկովի մազ	27
25. Քսէրօֆօրմ	27
26. Ֆէնացէտին	27
1. Ածխահոտից ուշաթափութիւն.	28
2. Ամսական արիւնհոսութեան բացակայութիւն	32
3. Ամսական սաստիկ արիւնհոսութիւն	34
4. Ամսական դժվար արիւնհոսութիւն	35
5. Այրվածք	36
 Անցուցք տես վիճումն:	
6. Անքնութիւն	40
7. Աչքացաւ	41
8. Ատամնացաւ	41
9. Արեահարութիւն	42
10. Արիւնհոսութիւն ականջից	44
11. Արիւնհոսութիւն թոքերից	45
12. Արիւնհոսութիւն մայասիլից	46

ԵՐԵՍ

13. Արիւնհոսութիւն ստամոքսից	47
14. Արիւնհոսութիւն վէրքից ու ճանգիթվածքից	48
15. Արիւնհոսութիւն քթից	49
Բկացաւ տես կոկորդի բորբոքումն	
16. Գլխացաւ	51
17. Դիֆտէրիտ	52
18. Զկոտոց	56
19. Ընկնեռութիւն	56
20. Թարախակալ ուռուցք	58
21. Թունաւորութիւն բէրտօլէ- տեսնաղով	59
22. Թունաւորութիւն իօդով	59
23. Թունաւորութիւն լիապիսով	59
24. Թունաւորութիւն ծիսախոտով	60
25. Թունաւորութիւն կարբօլեան թթւուտով	61
26. Թունաւորութիւն կօկախնով	62
27. Թունաւորութիւն միշեակով	63
28. Թունաւորութիւն մօրֆիով և օպիով	64

ԵՐԵԱ

29. Թունաւորութիւն նաշատիրի
սպիրտով 65
30. Թունաւորութիւն նաւթով 65
31. Թունաւորութիւն պղնձով 66
32. Թունաւորութիւն սուլէմայով 67
33. Թունաւորութիւն սունկերով 68
34. Թունաւորութիւն սորիխինի-
նով 70
35. Թունաւորութիւն տրիխինա-
ներով 71
36. Թունաւորութիւն փչացած կալ-
բասով 73
37. Թունաւորութիւն քացախով 74
38. Թունաւորութիւն ֆօսֆօրով 75
39. Խեղդումն կերակրից 76
40. Ծակոցներ աղիքներում 76
41. Ծակոցներ երիկամունքներում 78
42. Ծակոցներ ջիգեարում 79
43. Կախվածին օգնելը 80
44. Կայծակնահարութիւն 81
45. Կո՛լորդի և սսար սկ բ ւ բոքումն 82

46. Կատաղած շան կծածը 83
47. Կարիճի կծածը 85
48. Հազ 85
49. Հարփածութիւն 86
50. Հարփուխ 90
51. Մատնաշունչ 92
52. Մեղուի կծածը 93
53. Շնչարգելութիւն 94
54. Ուղեղի ցնցումն 96
55. Ուշաթափութիւն 97
56. Զարդվածք, հարված 100
56. Զզային և ծակոցներ 102
58. Զրախնեղդ մարզուն օգնելը 102
59. Սառածին օգնելը 104
60. Սրտախառնութիւն—փսխումն 107
61. Սրտի թուլութիւն 107
62. Սրտի թրթոոց 108
63. Վախ 109
64. Վիժումն 110
65. Փորացաւ, սանձու 111
66. Փորլուծութիւն 112
67. Օձի կծածը 115
68. Մահվան նշանները 117

ԾԱԽՎՈՒՄ Է ՆԱԵՒ ԻՄ ԿԱՇՄԱՄ
,,ԳԱՂՏՆԻ ՅԻՒԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԻ
ԲԺՇԿԱՐԱՆԻ"

Բազմաթիւ խորհուրդներով, բէցէպտներով
և նկարներով, Գինը 50 կոպէկ, Դիմել ինձ,
ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- I. Տղամարդի սեռական գործարանները
- II. Տրիպէր (սուսունակ)

1. Շագանակածն գեղձի բորբոքումը
2. Ամորձիքների (ձուան) բորբոքումը
3. Միզապարկի բորբոքումը
4. Խոշոր թարախակ, միզանցքում
5. Արիւնահոսութիւն միզանցքից
6. Աչքերի բորբոքումն սուսունակից
7. Երիկամունքների բորբոքումն
8. Յօդերի սուսունակային բորբոքումն
9. Միզանցքի նեղութիւնը
10. Ծակոցներ, այրոցներ միզանցքում.
11. Անդամի գլխի և թլպատի բորբոք.

12. Բուբօն տրիպէրից
13. Տրիպէրի լնդհանուր ազդեցութիւնը
- III. Կեղծ տրիպէր
- IV. Տրիպէրի բժշկութիւնը
- V. Դեղեր և խորհուրդներ
- VI. Կոնջ սեռական գործարանները
կնոջ արտաքին սեռակ, մասերը
- VII. Կանանց տրիպէրը (սուսունակը)
- VIII. Բունոցի սուսունակը
- IX. Փափուկ շանկը
- X. Սիֆիլիս
- XI. Սիֆիլիսի բժշկութիւնը
- XII. Քամոտութիւն
- XIII. Ոտքերի բրտինքը և հոտը
- XIV. Բերանի վատ հոտը
- XV. Ոչլոտութիւն
- XVI. Մայասիլ
- XVII. Օնանականութիւն
- XVIII. Երագախաբ
- XIX. Սպէրմատորէա
- XX. Նախագդուշութեան կանոններ

ԲԺՇԿՈՒԹ. ՓՆԼԴՇԵՐ

Ա. Գ. ԵՍԱՅԵԱՆ

Բժիշկների որոշմամբ անում հմ կաշուի տակ սրսկումներ—սակաւարիւնութեան, լղարութեան և թոքերի հիւանդութեան դէմ. սուսունակի դէմ լուացումներ. ցոյց եմ տալիս սեռական թուլութեան դէմ նորագոյն պատրաստի միջոցները: Էլէքտրականութիւն. մասսաժ: Եկուոր հիւանդներին ցոյց եմ տալիս մասնագէտ հմուտ բժիշկների: Օտարերկրացիներին ուղարկում եմ գրաւոր խորհուրդներ և ըէցէպտներ (առաջուց պէտք է ուղարկել 3 ըուբլի): Ինձ մօտ կազմակերպում եմ եկուորների համար բժշկական խորհուրդ (կօնսիլիում) հմուտ բժիշկներից: Հասցէս՝ Տիֆլիս Սումենովսկայ պլ. № 9. Հնդունելութիւնս ամեն օր 3—4 ժամ:

«Ազգային գրադարան



NL0262721

Իմ հեղինակած և կազմոծ գրքի
մեծ մասը՝ ոպտոված է, ներկայ
կան միայն հետեւալները:

1. Փորձանքների բժշկարան, գինը
2. Վիճներակ, ախտերի բժշկարան,
ըէցէպտներով ու խորհուրդ-
ներով, գինը
3. Կնիկարմատի շալվար, վօղրովի 2
4. Բաֆֆիի կենսագրութիւնը
(պատկերով) 10
5. Ծիծաղի տկնողը, անեկդոտներ 20
6. Միևնոյն դաշտաղում, պատմվածք

Դիմել գրավաճառներին և ինձ. Տէ-
լիսъ, Семеновская ул. № 9. Մե-
զնաք մу фельдшеру А. Г. ЕСАЯН
Գրքերի գինը և 17 կուգ. աւել-
մարկա ճանապարհածախանի հա-
ռողարկել առաջուց մարկաներով. Գ-
մարով զեղչ: